№ 84 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 21

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 21 № 84

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտագին սրտով այրի Նոյեմզար Օհաննէսեան, որդիք Վահան, Վաղարշակ, Խորէն և Ամբրոսիոս Գրիգորեան Սբորչիկեանները ընտանիքներով յայտարարում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ առաջիկայ կիրակի, ապրիլի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին, Կարս քաղաքում ծխական եկեղեցում կը մատուցվի պատարագ, իսկ պատարագից յետոյ ժամը 12-ին հոգեհանգիստ՝ առաջինի Թանկագին ամուսնու, և վերջինների երջանկայիշատակ հօր՝

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՋԱՆԵԱՆ ՍԲՈՐՉԻԿԵԱՆՑԻ

(հ. ու.) հոգու համար։ 2—2

ԵՂԲԱՅՐՔ

ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Առևտրական խանութը սոյն ապրիլի 1-ից ՓՈԽԱԴՐՎԱԾ է Սիօնի փողոցից Ա. Մանթաշեանի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազազխանայի կից։

Մուտքը բազազխանայից եւ. Մանթաշեանի շարքերից (Манташ. ряды) №№ 30, 31, 32, 33, 40 և 41.

(կ. չ. ու.) առ. 2—10

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, ապրիլի 23-ին, ժամը 4-ին կէսօրից յետոյ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ և ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ

կը կարդան

ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական կուսակցութիւնների և Պետական Դումայի ընտրութիւնների մասին։

Մանրամասն ծրագիրը առանձին կը տպվի։ Մուտքը 10 կոպէկ է։ 1—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

([illegible] աշխատութիւնները)

1) Խրիմեան Հայրիկ առանձին	գինն 30	կ.
2) Վեհափառ Հայրիկ Օշականում	» 30	»
3) Հայոց Հայրապետութիւնը 15 գոյնով	50	»
4) Վարդանանց պատերազմը	» 50	»
5) Ոգի Հայաստանի	» 50	»
6) Ոգի Հայաստանի 92 գոյնով, տիպ արտասահմանի, ձեռագործի համար, հրատար. Վարդանեանի, 5 րուբ.	—	—
7) Ս. Էջմիածին, ձեռագործի համար	» 50	»
8) Աղասի հերոս	» 30	»
9) Ադամեան	» 30	»
10) Միքայէլ Նալբանդեան	» 30	»
11) Գամառ-Քաթիպայ	» 40	»
12) Պէշիքթաշլեան	» 50	»
13) Կարա-Մուրզա	» 30	»

10 օրինակ գնողներին րուբլուն 20 գեղչ։ Ճանապարհածախսը մեզանից. վերադիր վճարով ուղարկվում է միմիայն նրանց, որոնք պահանջի հետ կուղարկեն փողի $^1/_3$ մասը, և կարող են ուղարկել մարկայով. կատարում ենք պատուէրներ ընթերցանութեան գրքերի և դասագրքերի, րուբլուն 20 գեղչ, ճանապարհածախսը մեզանից. ընդունում եմ կոմիսիայով գրքեր վաճառելու։

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій прос. Книжный магазинъ «Пушкинъ»

(առ) 1—2

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՄԱՐ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ընտրողական ցուցակների ոչ լրիւ լինելու և անկանոնութեան դէմ յայտարարութիւններ և գանգատներ ներկայացնելու պայմանաժամը լրանում է

ՆԵՐԿԱՅ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բացառիկ դրութիւն. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Մահմեդականները ու Պետական Դուման. Մի բացատրութիւն. Կէս ձայն աւելի. Ինչպէս պէտք է մշակել սահմանադրութիւնը. Տեղեկութիւններ գաւառից. Ուսումնական համագումարի առիթով. Նամակ Սղնախից. Նամակ Ստաւրոպոլից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Պարսկաստանից. Սան Ֆրանցիսկոյի կատաստրոֆը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱՑԱՌԻԿ ԴՐՈՒԹԻՒՆ

I

մենտական ընտրութիւնների օրերը, Երևանում և Գանձակում սկսել են լուրջ կերպով զբաղվել ընտրութեան գործով։

Մի հարց, որ դրված էր Փոխարքայի կողմից, իբրև կարելիութիւն, այժմ սկսում է գործնական նշանակութիւն ստանալ։ Այդ այն հարցն է, թէ արդեօք Թուրքերը և հայերը միասին պէտք է կատարեն ընտրութիւնները, թէ առանձին ընտրողական շրջաններում։

Աչքի առաջ ունենալով հայ-Թուրքական յարաբերութիւնների դեռ ոչ բաւարար դրութիւնը, ընտրողական գործողութիւնների դժուարութիւնները, այլ և փոքրամասնութեան իրաւունքների պաշտպանութեան հոգսը, Գանձակի հայերը հարց են յարուցել առանձին-առանձին ընտրութիւններ կատարելու նահանգում։

II

Արդարև դրութիւնը անսովոր է և բացառիկ։

Հայերը և Թուրքերը դեռ մեծ երկիւղի մէջ են՝ թէ կարող են նորից բռնկվել ընդհարումներ երկու տարրերի մէջ, դեռ վստահութիւն չունեն միմեանց վրա, դեռ նրանցից ոչ մէկը չէ հաւատում թէ հարևանը անկեղծ կերպով կը պաշտպանէ և իր շահերը. իսկ այդ պայմաններում դժուար կարելի է յուսալ, որ հայը և Թուրքը անաչառ կերպով կընտրեն ներկայացուցիչներ Դումայի համար և ոտի տակ չեն տայ փոքրամասնութեան շահերը։

Գուցէ և ապագայում, կեանքի բոլորովին կանոնաւոր պայմաններում էլ, աւելի նպատակայարմար կը դառնի տարբեր ընտրողական շրջաններ կազմելու առաջարկը։ Դա կը պարզեն քաղաքական կեանքի հանգամանքները։

Բայց ներկայի պայմանները թելադրում են նոր պայքարներ ու դժգոհութիւններ չը յարուցանել երկու տարրերի մէջ և իւրաքանչիւրի համար նշանակել առանձին ընտրողական ժողով՝ ընտրելիների որոշ թւով։

III

Երևանեան նահանգում հայերն են կազմում մեծամասնութիւն, իսկ Գանձակի նահանգում Թուրքերը։ Ուստի նպատակայարմար է թւում, որ առաջին նահանգում հայերը ունենան երկու տեղ, Թուրքերը մէկ, իսկ Գանձակի նահանգում Թուրքերը երկու տեղ, հայերը մէկ։

Եթէ հայ-Թուրքական ընդհարումները տեղի ունեցած չը լինէին, անկասկած, հայերը՝ Թուրքերը պայմանաւորված կը լինէին իրանց ընդհանուր ընտրելիների վերաբերութեամբ, բայց իրականութիւնը դրել է մեր առաջ լարված յարաբերութիւնների մի այնպիսի հանգոյց, որի լուծումը կը զբաղեցնէ մեզ դեռ շատ ժամանակ և գուցէ մենք ստիպված լինենք նրան ընդունելու իբրև մեր երկրի կեանքի վրա ազդող խոշոր գործօններից մէկը։

Մենք աշխատում ենք, որ Թիֆլիսում ընտրութիւնները չը կրեն ազգային բնաւորութիւն և որ ծրագրային, կուսակցական հոսանքները կապեն մարդկանց միմեանց հետ, և յուսով ենք, որ կը հասնենք նպատակի։

Բայց հայ-Թուրքական գժտութիւնը, որքան էլ ոչ ցանկալի մի երևոյթ լինի, բայց նա իրողութիւն է, որ ազդում է գործերի վրա։ Եւ մենք նրան չենք կարող բացասել։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախիջևան-Դոնի վրա, 19 ապրիլի

Այսօր Ռոստովի և Նախիջևանի հայ ազգաբնակութիւնը ուղարկեց Ամենայն Հայոց Կաթուղիկոսին հետևեալ հեռագիրը.

«Անլուր տանջանքների և փորձութիւնների այս վշտալի տարում, երբ հայի գոյքը, պատիւը և նոյն իսկ անձը դրված է ոչ միայն օրէնքների պաշտպանութիւնից դուրս, այլ և ենթարկվում է ոչնչացման, ստորացումի և անարգանքի, մենք հեռուից, անզօր օգնելու, գլուխ ենք խոնարհում մեր ապաբաղդ, աւերված ու անարգանքի մատնված եղբայրների, քոյրերի և մայրերի տանջանքների առաջ և աղերսում ենք ամենաբարձրեալին պարգևել անծայր տառապանքի ենթակայ ազգին էլ աւելի ոյժ դիմանալու ճակատագրի հասցրած այդ անտեղի հարվածներին, հաւատացած լինելով, որ բռնութեան տխրահռչակ ասպետների բոլոր ատելի և խայտառակ անունները երբեք մոռացութեան չենք տալու ոչ մենք և ոչ էլ մեր սերունդները յաւիտեան։

Խորապէս հաւատում ենք, Ձերդ Օծութիւն, որ ռուսաց հասարակութեան և ռուս մամուլի լաւագոյն մասը կարեկից է մեր տանջանքներին։ Երդուեալ-հաւատարմատար Ջալլուշեան, Մուշէ վարդապետ։ *)

—

Մարգակերտ գիւղ, (Ջիւանշիրի գաւառ), ապրիլի 15-ին

գաւառում։ Թուրքերը շարունակ գողանում, սպանում են օր ցերեկով։ Այս գիշեր, օրինակ, տարել են մեր ձմեռանոցից տասը կով, թողնելով հորթերին բառանչելիս։ Մեր գիւղացիք գնացին գաւառապետի մօտ աղերսելու, որ յետ տան կովերը, որովհետև հորթերը կոտորվում են։ Ամսիս 11-ին առաւօտը Ջափար գիւղից վեց երիտասարդ գնում են և մի տեղ նստում հաց ուտելու, յանկարծ նրանց շրջապատում են մօտ երեսուն զինված Թուրքեր և ուզում են կենդանի բռնեն ու տանեն, բայց չեն կարողանում. հինգը փախչում ազատվում են, իսկ մէկը սպանվում է։ Սպանվածի ականջները կտրում տանում են իրանց մեծերին ցոյց տալու։ Պրիստաւը գնաց եղելութեան տեղը։

Արդեօք ինչ կը լինի մեր օրը, երբ ծառերը տերևներ կանեն։

Մ. Զախարբէգեանց

—

Շուշի, ապրիլի 14-ին

Երէկ երեկոյեան քաղաքս ժամանեց Փոխարքայի օգնական գեներալ Մալամա։ Քաղաքից դուրս ընդառաջ էր գնացել հայ և Թուրք ազգաբնակութիւնից բաւական բազմութիւն։ Գեներալը իջաւ «Մարգիի» հիւրանոցում։ Երեկոյեան նա ընդունեց հայ և Թուրք ներկայացուցիչներին, որոնք խնդրեցին՝ 1, լուրջ ուշադրութիւն Վարանդայի վերջին այլանդակ դէպքերի մասին. 2, երկաթուղու շինութիւնը դէպի քաղաքս արագացնելու մասին. 3, քոչւորների չուելու ժամանակ գործադրվելիք միջոցների ապահովութեան մասին և 4, քաղաքիս աւերակների վերաշինութեան համար և կառավարութիւնից նպաստ տալու մասին։ Գեներալը խոստացաւ կատարել, որը որքան հնարաւոր և կախված կը լինի իրանից։

Այսօր առաւօտ նա ճանապարհվեց դէպի Գորիս։ Ժամը 9-ին նրա Թթու-Ջրից անցնելուց յետոյ, երկու ժամ չանցած, 11-ին, մի և նոյն ժանապարհով գնում է և հայերի բեռնած քարաւանը։ Մինչև Թթու-Ջուրը հինգ վերստ մնացած՝ ճանապարհի երկու կողմից դուրս են թափվում 20—30 զինված Թուրքեր, շրջապատում անզէն հայերին և սկսում հրացանի զարկեր։ Թշուառ ճանապարհորդները շուար ու մոլոր այս ու այն կողմն են ընկնում, այս ու այն բեռան յենվում, այս ու այն քարին ապաստանվում, բայց փրկութիւն չեն գտնում, երկու հոգի սպանվում են, երեքը վիրաւորվում, իսկ մնացած տասը իրանց ձգում են ճակատագրի բախտի առաջ և փախչել սկսում։ Ազատվում են նրանք արդեօք կարկտի նման տեղացող գնդակներից, թէ կոտորվում կամ գերի ընկնում՝ այդ դեռ յայտնի չէ։ Թալանված են բոլոր ապրանքները, 150 բեռ։

Դէպքը ճնշող ազդեցութիւն ունեցաւ և սթափեցնող տպաւորութիւն թողեց քաղաքի վրա։ Առաւել նշանակալից է, որ այդպիսի մի դժբաղդութիւն պատահում է Փոխարքայի օգնականի ճանապարհի վրա, նրա ետևում, դեռ երկու ժամ չանցած, դեռ հետքը չը կորած։

Սա մի սև խաղ է, անշուշտ նախամտածված, նպատակը—դժուար լուծելի, գուցէ և շատ պարզ։

Խլեցէք հայերից զէնքերը, բաց թողեցէք նրանց անապատներում ու սարերում, մի մահակի միջից բռնած, և թողէք, որ Թուրքերը զէնքով չափչփեն այս ու այն կողմը, սար բարձրանալու մահանայով, ու պատահած անզէն հայերին կոտորեն, անշուշտ կոտորեն, անվերջ կոտորեն... Եւ երաշխաւորվեցէք, որ չեն կոտորել. հա, հա, հա, չեն կոտորել... Խենթեր։

—

Ապրիլի 16-ին

Երէկ երեկոյեան վերադարձաւ գեներալ Մալամա և այսօր ճանապարհվեց Թիֆլիս։

Առաւօտեան հիւրանոցի առաջ լցվել էր հայերի անզգին բազմութիւն, գլխաւորապէս արհեստաւորներից։ Գեներալը գնացել էր նայելու զօրանոցը, զինւորական հիւանդանոցը և հայերի մախիր կտրած, այրված ու աւերված տներն ու խանութները։ Հիւրանոց դառնալիս նա կանգնեց դրան առաջ և լսեց սպասող բազմութեան բողոքը—ճանապարհների ապահովութեան, Թուրքերի վերջին յարձակումների ու կոտորածների և Գոլոշչապովին իր նախկին միասխայով այստեղ ուղարկելու մասին, և պատասխանեց, որ վերջին դէպքը, այն է՝ իր ետևից հայերին կոտորելը հասարակութիւնը պէտք է ընդունէ իբրև մասնակի դէպք և նրան ընդհանուր՝ հայ-Թուրքական խռովութեան բնաւորութիւն չը պէտք է տայ և թէ այդ մասին արդէն նշանակված է հետախուզիչ զինւորական խումբ աւազակներին բռնելու, որ ճանապարհն արդէն բաց է և ազատ կը լինի վտանգից։

Նա [illegible] և մասնաւոր [illegible] պատասխանեց, որ այդ կարգադրութիւնը իրան չէ վերաբերում։

—

Ապրիլի 17-ին

Թթու-Ջրի դէպքից փախուստ ընկած հայերից երեք հոգու գերի էին բռնել Թուրքերը։ Երբ դրանք թալանած ապրանքը իրանց մէջ բաժանելու ժամանակ վէճ է բացվում և կռիւ են բռնվում իրար հետ, հայերը կարողանում են փախչել և ազատվել։ Նրանք քաղաքս վերադառնալով՝ պատմել են, որ ճանաչել են Թուրքերից մի քանիսին, որոնց մէջ քիւրդ Փաշա-բէգի աղին և խալփալուեցի մի քանի Թուրքերի, որոնք ամեն օր քաղաք էին գալիս գնում։ Հէնց դէպքի առաւօտը հայի բազարում տեսել են մի քանի խալփալուեցի Թուրքերի, խօսելիս քաղաքացի Թուրքերի հետ, որոնք շտապ-շտապ վերջացնելով իրանց իբր առևտուրը՝ մեկնել են քաղաքից։ Դրանք եղել են հինգ հոգի և իրանց ոտներին հագած են եղել մեստներ։

Ուրեմն կասկած չէ կարող լինել, որ Թուրքերն օր առաջ իմացել են, որ այդ առաւօտ հայերի քարաւան է գնում, և պատրաստվել են։ Բայց, կրկնում ենք, ինչո՞ւ անպատճառ այդ օրը, քանի որ ամեն օր հայի քարաւան էր գնում և իրանք հնարաւորութիւն ունէին ամեն մի րոպէ իրանց դժոխային նպատակն իրագործել։

Ինչո՞ւ և ինչո՞ւ։

Եւլախից եկողները պատմում են, որ Թուրքերը ճանապարհին սկսել են սովորական մամռոցներ, սպառնալիքներ ու հայհոյանքներ։ Դրա համար էլ մի երկու օր դէպի Եւլախ հայ ճանապարհորդներ չը գնացին։

Քաղաքում էլ արդէն նկատելի կերպով աչքի է ընկնում հայերի և Թուրքերի յարաբերութեան մի տեսակ սառնութիւն և խզում։ Հայ արհեստաւորներին, որոնք Թուրքերի տներում բան են անում—դուրգեար, բաննահ, մշակ և այլն, մի քանի առաւօտ է, որ իրար վրա յետ են դարձնում ասելով «գնացէք, գալադուղների խաթեան քիչ չէ...»։ Նոյնպէս քիչ Թուրքեր են երևում հայերի մէջ և քիչ հայեր Թուրքերի մէջ։

Տ.

—

Թէհրան, 19 ապրիլի

Անկարգութիւններից յետոյ դրութիւնը Սէյիստանում վատացաւ։ Տեղական բժշկական մասնախումբը անզօր է համաճարակի առաջն առնելու։ Կործանվել են կարանտինները, պահակախումբը ցրվել է։ Մթերքները թանգացել են, իսկ հիւանդութեան շրջանը օր աւուր ընդարձակվում է։ Մենակ յոյսը շոգի վրա է, որ սպանում է ժանտախտի միկրօբներին։ Աշնանը ժանտախտը վերականգնելու է մեծ ոյժով։ Սէյիստանի սահմաններում անգլիացիները զօրքեր են կենտրոնացնում, լուրերին նայած՝ թերևս կրկնվող անկարգութիւններից իրանց հիւպատոսարանը պաշտպանելու համար։

(Հեռ. Գործ.)

—

Ղզլ-Արվատ, ապրիլի 16-ին

Հրդեհ սկսվեց գլխաւոր գծի վրա գտնվող կայարանի դիմաց գլխաւոր դէպօյում։ Այրվեցին դէպօն իր ամբողջ պարագաներով և ի միջի այլոց վեց գնացք, որոնցից երեքը կարելի է նորոգել։ Վնասը հասնում է մօտաւորապէս 300,000-ի. հրդեհաշէջ խումբ չը լինելով՝ օգնութեան են հասնում միայն երկու վաշտ զինւորներ և կէս հարիւրեակ կօզակներ, որոնք կարողանում են մինչև առաւօտեան արշալոյսը մի կերպ հանգցնել կրակը։

Առաւօտեան ռուսների տներում ոստիկանութիւնը, Թուրքերի առաջնորդութեամբ, խուզարկութիւն կատարեց։ Խուզարկութիւնն ապարդիւն անցաւ։

Լևոն Սահակեանց

—

Ապրիլի 18-ին, ցերեկվայ 1 ժ. 20 րոպ. 6-րդ քաղաքամասում Խարփուխի սարից 8 անգամ կրակեցին։ Իսկոյն եկան այդտեղ Տիֆլիսսկի և Ելիսավէտպոլսկի գնդերի պատրուլներ, բայց նրանց չաջողվեց պարզել ովքեր էին հրացան արձակողները։ Ժողովրդից ոչ ոք չէ վնասվել։

—

Թիֆլիսի 10-րդ քաղաքամասի պրիստաւ Ջեգգինձէն նշանակված է Շարուր-Դարալագեազի գաւառապետ, իսկ նրա տեղը տեղափոխվում է 3-րդ քաղաքամասի պրիստաւ Բօյարինօվը, իսկ 3-րդ ոստիկանական մասի ժամանակաւոր կառավարիչ նշանակվում է պրիստաւի օգնական Գագիևը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Թիֆլիս քաղաքի բնակիչներից շատերը գանգատ են յայտնում քաղաքային վարչութեանը Պետական Դումայի ընտրողական ցուցակների մէջ սպրդված սխալների ու անկանոնութիւնների մասին։ Ցուցակների մէջ ընտրող չէ յիշված բանւորների մի խոշոր թիւ, որոնք առանձին բնակարաններ են վարձել, և այդ չը յիշելը մի քանի դէպքերում առաջ է եկել նրանից, որ ցուցակ կազմողները կարծել են, որ նրանք իբրև բանւորներ, առանձին են ընտրում լիազօրներ։ Բացի դրանից ընտրողական ցուցակների նայելը հնարաւոր է միայն ցերեկը, մինչդեռ քաղաքացիներից շատերը վարչութիւնը գնալ կարող են միայն երեկոները, որովհետև ցերեկը զբաղված են իրանց գործերով։ Այդ պատճառով ցանկալի կը լինէր հնարաւորութիւն տրվէր և երեկոները նայելու։ Անշուշտ այդ մասին կարգադրութիւն արված կը լինի։

—

Ապրիլի 18-ին կայացաւ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ընտրողների նախընտրական մի ժողով, որտեղ որոշեցին Պետական Դումայի համար թեկնածուներ՝ իշ. Գ. Թումանեանին, Բ. Վերմիշեանին, Ա. Խատիսեանին, Մ. Գրուզէնբերգին, Գ. Դիվազվային և Ա. Քալանթարին։ Ժողովին ներկայ էին 85 անձ։ Ա. Քալանթարը յայտնեց, որ նա մտադիր չէ իր թեկնածութիւնը դնել Պետական Դումայի անդամ ընտրվելու համար։

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

Ի՞նչ դիրք պէտք է բռնեն մահմեդական պատգամաւորները Պետական Դումայում։ Ահա մի հարց, որ հետաքրքիր էր պարզաբանել։

«Հայաթը» տալիս է հետևեալ յօդուածը՝ որ բաւական լոյս է սփռում մեզ հետաքրքրող հարցի վրա։

Թիւրք լրագրում հանդիպեցինք «Ռուսաստանի մահմեդականներին» վերնագրով մի յօդուած։ Այդ յօդուածի մէջ արտայայտված մտքերից մի քանիսը, սխալ ու անհիմն գտանք, բայց ուշադրութեան արժանի տեղերը տպագրում ենք։

«...Մարդկային նպատակներից ամենամեծը ազատութիւնն է։ Դուք, Ռուսաստանի մահմեդականներդ, որպէս թէ վերջերումս հրատարակված սահմանադրական օրէնքով այդ ազատութեան տէր եղաք։ Բնական է, յոյս ունեմ, բիւրօկրատիայի միտքը ամբողջապէս հասկացաք։ Նրա դիտաւորութիւնը ձեզ ազատութիւն տալ չէ, այլ աւելի ճիշտը ձեզ գործիք դարձնել իր բռնապետութեան։ Որովհետև վարչութեան հիմքը բռնակալութեան վրա դրված լինելով՝ այս ու այն կողմ կատարեալ եռանդով ու ջանքով գլուխ բարձրացնող դժգոհութիւնները, ըմբոստացումները ջախջախել... պատասխանատուութեան սկզբունքը չը պարունակող մի օրէնքի սահմանադրութիւն անունը տալը երեխայութիւն է։ Բացարձակապետութեան, աբսոլիւտիզմի գործի ուղղութիւնները չը սահմանափակող օրէնքը սահմանադրութիւն չէ կարող կոչվել և հետևաբար կամայական վարչութիւնը յարատև կը մնայ։

Մարդասիրութեան տեսակէտով, մենք Թիւրքերս նոյնպէս կողմնակից ենք սահմանադրութեան հրատարակմանը։ Որովհետև 140 միլիօն ժողովուրդները գերութիւնից պէտք է ազատվեն և իրանք կարող պէտք է լինեն պաշտպանել իրանց անհատական ու ազգային իրաւունքները։ Հարկաւոր չէ, որ հայերը ձեր մէջ խառնվեն և կամ դուք հայերի մէջ, այլ պէտք է գուցէ համաձայնութեամբ գործէք, ջանաք Դուման պատգամաւորներ ուղարկել ձեր թւի համեմատութեամբ և աշխատէք պատգամաւորի ընտրութեան իրաւունքը ընդհանուրդ ձեռք բերել։ Հարիւր քառասուն միլիօն հոգուց բաղկացած մի ժողովուրդի մէջ եթէ միայն ութ հազար հոգի այդ իրաւունքը վայելէ, դուք հազիւ երկու կամ երեք պատգամաւոր ուղարկելու իրաւունք պէտք է ունենաք։ Ահա այս անարդարութիւնը, այս անիրաւութիւնը պէտք է վերացնել. երբ այդ աջողվի և ձեր թւի համեմատութեամբ պատգամաւորներ ուղարկվի Պետերբուրգ, այն ժամանակ միայն կառավարութեան գործում իրաւունք ձեռք բերած կը լինէիք և ի նպաստ իսլամական գիտութեան ձեր ցանկացածը իշխանութեան գլուխ անցնող ապագայ կաբինէտին կատարել կը տայիք և ձեր կրօնը, ձեր մզկիթներն ու մէչիդները ճնշումներից ազատած կը լինէիք։ Հէնց այս մասին պէտք է աշխատել և գործել։ Պէտք է որ մազի չափ այս հարցը ձեր աչքից չը վրիպեցնէք։

Եւ եթէ վերոյիշեալ միտքը ընդունելով՝ ձեր կառավարութիւնը մի այդպիսի ստիպման տակ դնէք, մի՛ նմանվէք բնաւ ձեր բոլգարացի ազգէտ կրօնակիցներին։ Նրանք էլ թէև ազգային ժողովում պատգամաւորներ ունեն, բայց ամեն օր բոլգարների ճնշումից գանգատվում են։

Սակայն այնտեղի մահմեդականները պարլամենտում փոխանակ մի իսլամական կուսակցութիւն կազմելու, բոլորն էլ բոլգարների նման բաժան-բաժան եղած՝ ո՛րը Ստամբուլովի, ո՛րը Ռադոսլավովի, ո՛րը Պետկովի և կամ ուրիշների կուսակցութեան է պատկանում և բոլորն էլ կուսակցական կռիւների մէջ են թաղվել։ Բնաւ չեն մտածում, որ եթէ ուժեղ և միաբան մի կուսակցութիւն կազմեն, որ կուսակցութիւնն ուզում է թող իշխանութեան գլուխն անցնի, մեծամասնութիւն շահելու համար պէտք պիտի ունենար նրանց տասը, տասնեհինգ ձայնին, և նրանք յօգուտ իսլամական շահերի բոլոր մինիստրութիւններին կը տային իրանց քուէները և այդ մինիստրութիւններն էլ այդ ձայները չը կորցնելու համար կաշխատէին ի նպաստ իսլամական գիտութեան և իրաւունքների և կանէին ինչ որ իրանց ձեռքը կը գար։ Գուցէ և իսլամներից էլ մինիստր ասպարէզ կիջնէր և իր կրօնակիցներին ցոյց կը տար հարկ եղած պաշտպանութիւնը։

[illegible] գիտութեան համար։ Բաց արէք ձեր կրօնակիցների աչքերը։ Ձրի մի տաք ձեր քուէները իշխանութեան գլուխն անցնող կաբինէտին, այլ ի նպաստ իսլամական շահերի։ Այն ժամանակ ոչ մի տեղ մահմեդականներին չեն ոչնչացնի բռնութեամբ։ Ամեն տեղ կը փայլէ իսլամական գիտութիւնը, ոչ մի ժամանակ չէք մոռանայ ձեր ազգութիւնը, կը զարգանայ ձեր վաճառականութիւնը, ոչ մի պաշտօնեայ չէ կարող անիրաւութիւններ գործել մահմեդականների վերաբերմամբ, որովհետև ձեր պատգամաւորները իրանց քուէներով կը սպառնան կառավարութեան և կառավարութիւնն էլ ստիպված կը լսէ ձեր բողոքները և անարդար պաշտօնեաններին կը պատժէ։ Կառաջադիմէք ուսմամբ, առևտրով։ Ահա այդ ժամանակ միայն կարող կը լինէք մրցել ձեր հարևանների հետ։ Իսկ եթէ դուք էլ միմեանց հետ կռուելով ռուսական կուսակցութիւններին նեցուկ լինէք, բոլորդ էլ կը կորչէք և այն ժամանակ ռուսական բռնակալութիւնը այս օրերում աւելի ուժեղանալով՝ կը տեսնէք, որ ո՛չ կրօնական և ո՛չ էլ ազգային իրաւունքների տէր կը դառնաք, և ձեր մրցակիցների ձեռքում բոլորովին գերի կը լինէք. մի խօսքով՝ մեր՝ վերից վար, բոլոր ասածները կամփոփենք հետևեալ նախադասութեամբ. ինշալահ, անլայանա սիվրի սինէք սազ, անլամայանա դավուլ զուռնա ազ. (ինչ որ հայերէն դարձուածքով կարելի է թարգմանել. ականջ ունեցողը թող լսէ)։ Յոյս ունեմ դավուլ, զուռնայի կարիք չի մնայ և այս տողերը կը ծառայեն որպէս հիմնաքար կրօնական և ազգային շահերի պաշտպանութեան համար ապագայում կառուցվելիք բերդի»։

«Հայաթի» խմբագրութիւնն աւելացնում է իր կողմից հետևեալը.

Անկասկած, մեզանում, Ռուսաստանի մեր մահմեդականների մէջ էլ պիտի ստեղծվեն զանազան կուսակցութիւններ, երևան պիտի գան պահպանողականներ, լիբերալներ, ռադիկալներ, սօցիալիստներ, սօցիալ-դեմօկրատներ և այլն։ Առանց դրանց չի լինի։ Միայն հարկաւոր է, որ դրանք բոլորը նախ մի ընդհանուր մահմեդական կուսակցութիւն կազմեն և այդ ընդհանուր կուսակցութեան այլ և այլ ուղղութեան ճիւղերը հանդիսանան։ Եւրոպայում էլ այսպէս չէ՞ միթէ։ Օրինակ, վերցնենք սօցիալիստներին։ Յայտնի է, որ Եւրոպայում կաթօլիկ սօցիալիստները, բողոքական սօցիալիստները, նոյն իսկ անհաւատ սօցիալիստները գոյութիւն ունեն, և բոլորը առանձին առանձին սօցիալիստ կուսակցութիւններ են։ Հետևաբար պէտք է որ մեր սօցիալիստներն էլ իրանց «իսլամ սօցիալիստներ» անունը տալով աւելի ընդարձակ, աւելի ընդհանուր եղող մահմեդական մի խոշոր կուսակցութիւնից դուրս չը մնան։ Իրանց խմբերով փոխանակ ուրիշ ազգերի կուսակցութիւնները պաշտպանելու, զօրեղացնելու, թող ոյժ տան իրանց ընդհանուր կուսակցութեան! Այդ դէպքում, պատգամաւորական ժողովում, բօլգար մահմեդականների նման ցիրուցան չը լինելով մեր պահպանողականներն էլ, ռադիկալներն էլ, սօցիալ-դեմօկրատներն էլ ի մի հաւաքվելով մի խումբ կը կազմեն: Այս կերպով ամեն կուսակցութիւն, ամեն խումբ նախ իր ընդհանուր մահմեդական շահերը և յետոյ իր պատկանած մասնաւոր կուսակցութեան շահերը պաշտպանած կը լինի!..

---

*) Այս հեռագիրը տպվում է մի քանի կրճատումներով

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ինձ տեղեկութիւններ հասան, որ նախընտրական, նախապատրաստական մի ժողովում, որ տեղի է ունեցել Թիֆլիսում ծխական պատգամաւորների ցուցակ կազմելու համար, մի անձ յայտնել է իմ կողմից՝ թէ ես, Քալանթար, հրաժարվում եմ պատգամաւոր ընտրվելուց:

Ներկայ տողերով գալիս եմ ամենակտրական կերպով յայտնելու, որ ես, երբէք, ոչ ոքի իմ կողմից լիազօրութիւն չեմ տուել մի այդպիսի յայտարարութիւն անելու: Եւ ոչ ոքի չեմ ասել հրաժարականի ոչ մի խօսք և մինչև անգամ հեռաւոր ակնարկ չեմ արել այդ իմաստով:

Ինձ զարմացնում է, որ մեր օրերում կարելի է դարձել ուրիշի անունից կեղծ յայտարարութիւններ անել՝ չը գիտեմ ինչ նպատակներով:

Սակայն որովհետև մի անգամ հարցը շօշափված է, ես թոյլ կը տամ յայտնելու հետևեալը.

Ես չեմ հրաժարվել պատգամաւոր ընտրվելուց, բայց իմ կողմից էլ ոչ մի քայլ չեմ արել իմ ընտրութիւնը ապահովելու համար: Միևնոյն դրութեան մէջ էի ես, սրանից երեք ամիս առաջ, երբ ծխական ընտրութիւններ եղան հայ-Թուրքական համագումարի համար անդամներ ընտրելու նպատակով: Ծխականները հաւաքվեցին, խորհրդակցեցին և ընտրեցին պատգամաւորներ:

Հրաժարվելու հարց չէ եղել ոչ այն ժամանակ, ոչ էլ տեղի ունէր այժմ:

Ուրեմն իմ անունից խօսողը միայն հնարել է:

Միևնոյն ժամանակ անհրաժեշտ եմ համարում յայտնել, որ ես մտադրութիւն չունեմ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կազմի մէջ ընտրվելու և ցանկալի եմ համարում, որ դպրոց գնային աւելի՞ ազատ ժամանակ ունեցող անձեր, որոնք և նուիրվէին դպրոցի վերանորոգութեան գործին թէ տնտեսական և թէ կրթական կողմերից:

Օգտվում եմ դէպքից անելու և մի ուրիշ յայտարարութիւն:

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան մի քանի ժողովներում նշանակել են իբրև Թիֆլիսի ընտրելի Պետական Դումայի համար ուրիշ անունների հետ և իմ անունը:

Կուսակցութեան վերջին ժողովում յայտնեցի և այսօր մամուլի մէջ յայտնում եմ, որ ես մտադիր չեմ դնել իմ թեկնածութիւնը, իբրև Պետական Դումայի անդամի:

Բայց այդ անդամին ընտրելու համար կարևոր է ընտրել քաղաքի կողմից լիազօրներ 80 հոգի: Հրաժարվելով Պետական Դումայի պատգամաւորութեան թեկնածութիւնից, ես համաձայն եմ լիազօր ընտրվելու քաղաքի այն մասից (երկրորդ մասը), որտեղ ես ընտրողական իրաւունք ունեմ: Իսկ լիազօր լինելով կարելի է ազդել Դումայի անդամի ընտրութեան վրա:

Ո՛չ մի Թիւրիմացութիւն և անորոշութիւն:

Ա. Քալանթար

[illegible] պատգամաւորական ընտրութիւն:

Շուշու Թեմական դպրոցը այսուհետև հոգաբարձութիւն կունենայ: Հոգաբարձութիւն ժողովրդից ընտրված: Ուրեմն վերջապէս ժողովրդական ներկայացուցչութիւն:

Այդ էր պահանջում ժամանակը, դպրոցի իսկական շահը:

—Մինչև հիմա կատարված ընտրութիւնները ընտրութիւններ չէին եղել, այլ «տանուվարի» ընտրութեան նման մի բան:

Գոնէ այսպէս էին դատապարտում հինը, անցեալը—նրանք, որոնք առ երես անկեղծ էին ցոյց տալիս իրանց խօսքը:

Այդպէս էլ ներշնչում էին մասսային:

Շատ հաճելի է: Ուրախալի երևոյթ է: Ժողովուրդը գիտակցում է, զգում է անցեալի սխալը: Նա ըմբռնում է, հասկանում է՝ ինչ որ իրան լաւ են ցոյց տալիս, ինչ որ ինքը լաւ է տեսնում...:

Պատգամաւորական ընտրութիւն է: Նախքան հոգաբարձուներ ընտրելը պէտք է իւրաքանչիւր եկեղեցի երկու պատգամաւոր ընտրէ, որ նրանք թեմի միւս պատգամաւորների հետ մասնակցեն հոգաբարձական ընտրութեան: Ուրեմն Շուշին պէտք է տայ ութ պատգամաւոր, իսկ ամբողջ թեմը 12, ընդամենը 22, որոնք պէտք է ընտրեն 12 հոգաբարձուներ: Դա նոր կանոնադրութեան թէօրիան է, թէև շատ սխալ, թէև շատ տարօրինակ, գոնէ Շուշու համար: 22 հոգին պէտք է ընտրէ 12 մարդ, մեծ մասն ի հարկէ իր միջից.—ահա որն է սխալը: Գոնէ քաղաքը պէտք է տար ամենաքիչը 20 պատգամաւոր, մինչդեռ հնումը տուել է 40, առանց թեմի մասնակցութեան: Բայց հիմա որ թեմը մասնակցում է, որը շատ ուրախալի է, քաղաքը գոնէ պէտք է ունենար հին թիւ կէսը:

Սխալն ի հարկէ դուրս է եկել սխալ կանոնադրութիւն կազմելուց, որը ցանկալի է ուղղել ապագայում և ամեն մի ընտրութիւն յարմարեցնել տեղական պայմանների և պահանջների հետ: Սխալ է, մեր կարծիքով, նաև 12 հոգաբարձու տալը Շուշու դպրոցին: Գործը առաջ տանելը թիւ շատութեան մէջ չէ, այլ եռանդի: Շուշում նախ 12 յարմար թեկնածու չի ճարվիլ այս րօպէին և երկրորդ 12 շուշեցի հոգաբարձուների մէջ 12 կուսակցութիւն կը ստեղծվի անշուշտ, կը հեռանան բոլորը և գործը դարձեալ կը մնայ երեսի վրա...:

Բայց մենք շատ շեղվեցինք մեր խօսքից: Թողնենք այդ և տեսնենք թէ ինչպէս են մեզանում պատգամաւորներ ընտրում:

Ագուլեաց եկեղեցումն ենք: Առաջին անգամն է, հաւաքվել են 85 ծխականներ և առաջնորդի «կանոններով» ընտրութիւնը կայանալի է համարվում:

Նախագահ քահանան ցուցակագրելով ծխականներին, ժողովը բացված է յայտարարում և բաժանում է թերթիկներ ցուցակի հերթով: Քահանաները ևս մասնակցում են ընտրութեան և ստանում թերթիկներ. նոյնը ի հարկէ և ինքը նախագահը:

Տեղի են ունենում թեկնածուների առաջարկութիւններ, ճառախօսութիւններ, թեր և դէմ խօսակցութիւններ, անձնական սուր վրէժխնդրութիւններ և այլն:

Թերթիկները գրվում են, յետ ստացվում: Անունները կարդացվում են, ձայները հաւաքվում: Ընտրութիւնը ցոյց է տալիս այսպիսի պատկեր.—Ասլան Աթաբէկեան ստանում է 50 ձայն, իսկ Լևոն Աթաբէկեան (բացակայ) և Միքայէլ Ղարաբէկեան 36-ական հաւասար ձայներ: Ծխականներն առաջարկում են՝ կամ նոր ընտրութիւն կամ վիճակահանութիւն երկուսի մէջ: Բայց... ինչ հարկ կայ այդքան ձգձգել, օրը մթնում է. հեշտ միջոց կայ:—Քահանան վերացնում է այդ դժուարութիւնը և մի հարուածով լուծում է հանգոյցը. «Ես նախագահ եմ, ասում է, և իմ նախագահական աւել կէս ձայնը տալիս եմ Լ. Աթաբէկեանին, որ նա ընտրված համարվի և բանը վերջանայ»: Այդպէս էլ անում է: Ժողովականներից շատերը բողոքում և ցրվում են: Մնացածներն արձանագրել են տալիս տեղի փաստը:

Դատապարտելին, ի հարկէ, մէկի կամ միւսի թեկնածութեան հակվելը չէ և անունների հետ մենք գործ չունենք, այլ սկզբունքի ոտնահարութիւնը:

Ուրեմն իմացէք, հայոց եկեղեցու գործերի ընտրութիւններին նախագահող հայրեր և պարոններ, դուք ձայնատուութեան իրաւունք ունենալուց զատ ունիք և կէս աւել ձայն: Գիւտի նախապատւութիւնը պատկանում է Ագուլեաց եկեղեցու (ինքնակոչ) միաբան Կարապետ քհն. Վարդապետեանին և բարոյական պատօրինութիւնը վաւերացնող Թեմական առաջնորդին: Դուք պարտական էք նրանց այդ գիւտով, ուղարկեցէք շնորհակալութեան ուղերձներ...:

Եւ ո՛վ է ասում, որ կղերական ռէակցիան չէ կարող առաջ տանել իր գործը, իր «իշխանական» միտումները...:

Տ.

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՄՇԱԿԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

VII

Քուէարկութեան գաղտնի եղանակ

Երբ խօսք է լինում ընտրողական իրաւունքի մասին, միշտ ասում են, որ այդ իրաւունքը պէտք է լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի: Առաջին երեք ձևերը մենք արդէն բացատրեցինք, այժմ զբաղվենք չորրորդ ձևով, այն է թէ՝ ինչ է նշանակում գաղտնի քուէարկութիւն:

Այդ նշանակում է, որ ոչ ոք չը պէտք է իմանայ, թէ քուէարկողը ումն է տալիս իր ձայնը: Այդ բանը անհրաժեշտ է նրա համար, որ ընտրողները ազատ կերպով կարողանան ընտրել այնպիսի պատգամաւորներ, որոնց իրանք են իսկապէս ցանկանում: Երբ քուէարկութիւնը գաղտնի չէ, այդպիսի ազատութիւն երբէք չէ լինում, որովհետև քուէարկողները միշտ վախենում են իրանց մեծերից. աղքատ գիւղացին հողատէր ազնուականի վրէժխնդրութիւնից է վախենում, բանւորը վախենում է գործից զրկվել, գործակատարը իր տեղից, չինովնիկը—պաշտօնից և այլն, և այլն, այնպէս որ վերջի վերջոյ ընտրողները քուէարկում են ոչ թէ այնպէս, ինչպէս իրանց խիղճն է թելադրում, այլ ինչպէս են յայտնում գաղտնի քուէարկութեան դէմ, խորամանկաբար ասելով, թէ՝ ամեն ոք քաջութիւն ունենալու է իր համոզմունքները բացարձակապէս արտայայտելու: Դրանք, ի հարկէ, շատ գեղեցիկ խօսքեր են, բայց և այնպէս ոչ մի արժէք չունեն: Պէտք է չը մոռանալ երբէք, որ միլիոնաւոր մարդիկ ապրում են սոսկալի աղքատութեան, խաւարի և ստրկութեան մէջ. իրանց ողորմելի օրապահիկից զրկվելու սպառնալիքը, գործատէրերից ու վարչական մարմիններից կախումն ունենալը չափազանց մեծ է, որպէսզի նրանք համարձակութիւն ունենան իրանց «համոզմունքները բացարձակապէս արտայայտելու»: Ամենից առաջ անհրաժեշտ է ժողովրդի մէջ քաղաքացիական քաջութիւն մշակել, հարկաւոր է որ մարդիկ սովորեն քաղաքացիներ զգալ իրանց: Իսկ դա հեշտ բան չէ: Առ այժմ այդպիսի քաղաքացիական քաջութիւն ունեցողների թիւը շատ սակաւ է, ուստի, բացարձակ քուէարկութիւն պահանջելով, ոչ թէ ժողովրդի մէջ քաղաքացիական քաջութիւն չի մշակվի, այլ ընդհակառակը նրա խիղճը կամբարոյականացնի, որովհետև ժողովրդի մեծ մասը ստիպված պէտք է լինի հակառակ իր խղճի ու կամքի քուէարկել: Իսկ այդ ձևով, այսինքն վարչութեան և աղաների թելադրութեամբ ընտրված պատգամաւորները այնպիսի օրէնքներ կը մշակեն, որոնք աւելի ևս արգելք կը դառնան ժողովրդի ընդհանրութեան գիտակցութեանը և քաղաքացիական զգացմունքները զարգացնելուն, որովհետև իշխանաւորներն ու հարուստները շատ լաւ գիտեն, որ եթէ ժողովուրդը զարգանայ ու ըմբռնէ իր դասակարգային շահերը, նրանց տիրապետութեանն ու գերիշխանութեանը շատ շուտով վերջ կը դրվի:

Վերջապէս ուրիշներին քաղաքացիական քաջութեան քարոզներ խօսողներին ու խրախտացողներին կարելի է ասել. եթէ ձեր ճառերը անկեղծ են, բարեհաճեցէք քաջութեան և ազնուութեան օրինակ ցոյց տալ: Ապացուցէք, որ դուք երբէք չէք ծռվել ուժեղի ու հարուստի առաջ, որ դուք միշտ համարձակ ու անվախ կերպով բողոքել էք, երբ ձեր աչքի առաջ անիրաւութիւն է գործադրվել: Ասացէք, թէ դուք վատ կը վերաբերվէք այն գործարանատիրոջը, որը՝ գործից կը զրկէ ազատ կերպով քուէարկող բանւորին, թէ դուք այդպիսի գործարանատիրոջը ձեռք չէք մեկնի, երես կը դարձնէք նրանից, անարգելի մարդ կը յայտարարէք նրան, ձեր շրջանից դուրս կը վռնդէք: Քիչ չէ այնպիսի բանւորների կամ ծառայողների թիւը, որոնք իւրաքանչիւր օր թշուառութեան են մատնվում իրանց համարձակ, ազատ խօսքի, տէրերին անհաճոյ վարմունքների համար, սակայն դեռ չէ տեսնված, որ գէթ մի մարդ այդպիսի տէրերին, որոնք, օգտվելով իրանց դիրքից, ճնշում են բանեցնում իրանց ենթակաների խղճի վրա, անարգէր և թոյլ չը տար պատւաւոր հասարակութեան մէջ մտնելու նրանց: Եւ քանի որ այդպիսի բաներ չը կան, ուրեմն կեղծաւորութիւն է խնդել ժողովրդին այնպիսի «քաջութեան» քարոզներ խօսելը, որից հենց իրանք քարոզողները շատ զուրկ են: Չէ կարելի ասել, թէ այդ կարգի քարոզները միայն տգիտութեան հետևանք են. շատ անգամ դրանց տակ նենգամիտ ձգտումներ են թաքնված, այն է՝ աշխատաւոր ժողովրդի քուէարկութիւնը ենթարկել գործատէրերի և կառավարութեան հսկողութեանը, որպէս զի նրանք չը կարողանան ազատ կերպով ընտրութիւններ կատարել: Արտասահմանում քիչ չեն այնպիսի օրինակներ, երբ գործարանատէրերը բանւորներին քուէարկութիւններ են ուղարկում իրանց վերակացուի ղեկավարութեամբ: Եւ վա՜յ այն բանւորին, որ կը համարձակվի քուէարկել ոչ այնպէս, ինչպէս որ հաճելի է գործարանատիրոջը: Այդպիսի համարձակներին ասում են. «ազնուութիւնը լաւ բան է, բայց և այնպէս հենց վաղը արի հաշիւդ ստացիր:»

Ամեն կերպ պէտք է պահանջել, որ քուէարկութիւնը գաղտնի լինի: Այդպիսով միայն ժողովուրդը հնարաւորութիւն կունենայ չը ծռմռել իր խիղճը. ընտրել իր ուզած մարդուն և պաշտպանել իր շահերը:

Բայց ինչպէս անելու է, որ քուէարկութիւնը իրապէս գաղտնի լինի:

Մենք արդէն խօսել ենք, թէ ինչ եղանակներով են ընդհանրապէս ընտրութիւնները կատարվում. ընտրողական տոմսակի վրա նշանակվում է այն թեկնածուի անունը, որին ընտրողը կամենում է քուէ տալ և ապա այդ տոմսակը նա դցում է քուէատուփի մէջ ընտրողական բիւրոյի ներկայութեամբ:

Բայց ահա թէ այս դէպքում ինչպիսի հարց է առաջանում. ընտրողական տոմսակի վրա թեկնածուի անունը նշանակելու համար չէ որ գոնէ պէտք է կարդալ իմանալ, մինչդեռ շնորհիւ միապետական կարգերի, Ռուսաստանի ժողովրդի կէսից աւելին անգրագէտ է: Ի՞նչպէս պէտք է վարվեն ուրեմն անգրագէտները: Եթէ թոյլ տալ, որ անգրագէտի տեղ մի ուրիշը գրէ, այն ժամանակ քուէարկութեան գաղտնիքը երևան կը գայ, իսկ եթէ թոյլ չը տալ, նրանք չեն կարողանայ քուէարկել և այդպիսով ժողովրդի կէսից աւելին կը զրկվի քուէարկելու իրաւունքից:

Դրա համար, սակայն, ելք կայ և մի շատ հասարակ ելք: Հարկաւոր է, որ ամեն մի թեկնածուի ներկայացնող կուսակցութիւն իրաւունք ունենայ իր ընտրողական տոմսակները տպագրել, և որ իւրաքանչիւր կուսակցութեան տոմսակները մի առանձին և յատուկ գոյնի լինեն: Որչափ կուսակցութիւններ կամ թեկնածուներ կան, այնչափ էլ բազմագոյնի տոմսակներ կը լինեն. կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, սպիտակ և այլն: Եւ ոչ մի կուսակցութիւն իրաւունք չը պէտք է ունենայ մի այլ կուսակցութեան ընտրած գոյնը գործածել:

Նախօրօք բոլորն էլ պէտք է իմանան, թէ ո՛ր գոյնը ինչ թեկնածու է նշանակում: Այդ ժամանակ անգրագէտն էլ կարող է առանց ուրիշի օգնութեան քուէարկել, բաւական է միայն, որ նա գիտենայ, թէ ո՛ր գոյնը՝ որ կուսակցութեանն է վերաբերում: Ի հարկէ, իւրաքանչիւր ընտրողին պէտք է տրվի ամեն գոյնի տոմսակներից էլ, իսկ թէ նա ո՛ր գոյնի տոմսակով կօգտվի, այդ իր գաղտնիքն է, այդ մասին ոչ ոք չը պէտք է իմանայ:

[illegible] բիւրոյի աչքի առաջ, որպէս զի միևնոյն մարդը չը կարողանայ միաժամանակ մի քանի տոմսակ դցել: Ուրեմն, եթէ տոմսակները տարբեր գոյների են, բիւրօն իսկոյն կը նկատի, թէ ընտրողը ի՛նչ գոյնի տոմսակ է դցում և, հետևապէս, կիմանայ, թէ նա ումն է քուէ տալիս: Որպէս զի այդպիսով քուէարկութեան գաղտնիքը երևան չը գայ, մի շատ պարզ միջոց է հնարված: Քուէարկելուց առաջ ընտրողը մի առանձին սենեակ է մտնում, ուր նրա տրամադրութեան տակ նախօրօք և ձրիաբար անթափանցիկ ծրարներ են դրված լինում: Այդ սենեակում ընտրողը, մնալով բոլորովին միայնակ, իր ընտրած գոյնի տոմսակը այդ ծրարներից մէկի մէջ է դնում, փակում է և ապա դուրս է գալիս և ընտրողական բիւրոյի աչքի առաջ դցում է քուէատուփի մէջ: Այս եղանակով քուէարկութեան գաղտնիքը կատարելապէս ապահովված կը լինի և անգրագէտների համար: Միևնոյն ժամանակ անհնարին կը լինի մէկից աւելի տոմսակ դցելը, որովհետև ամենքն էլ գիտեն, որ ամեն մի ծրարի մէջ մէկ հատ տոմսակ պիտի լինի միայն:

Այս բոլոր պայմանները լինելով հանդերձ, դարձեալ պէտք է ընտրութիւնների ամբողջ ժամանակ շատ լուրջ կերպով հսկել, որ զանազան կեղծիքներ չը կատարվեն: Ոմանց համար անհաւատալի կը թւի, որ հարուստները ու դիրք ունեցող մարդիկ սուտ կեղծիքներով ու խարդախութիւններով պղծեն, սակայն եւրոպական երկրներում հաճախ անգամ դրանց ագենտներին բռնել են՝ ընտրութիւնների ժամանակ գաղտագողի նայելիս, ականջ դնելիս, ընտրողներին կաշառելիս, հարբեցնելիս և այլն: Այս բոլորը աչքի առաջ ունենալով, ժողովրդի գիտակից տարրերը, նամանաւանդ գիտակից բանւորները իրանց վրա պիտի վերցնեն՝ ժողովրդի թշնամիների կողմից լարված բոլոր դաւերին հսկելու պարտականութիւնը և ականջներն ու աչքերը խիստ սուր պահեն: Հէնց որ մի բան նկատեն, իսկոյն պիտի պահանջեն ընտրողական բիւրոյից՝ արձանագրութիւն կազմել, որպէս զի յետոյ հնարաւորութիւն ունենան ապացուցանելու, թէ ընտրութիւնները անկանոն են կատարվել և որ անհրաժեշտ է նոր ընտրութիւն նշանակել:

Ահա և մենք վերջացրինք նկարագրել, թէ ինչպէս պիտի վարվել, որ ընտրողական իրաւունքները իրապէս լինեն «ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի»:

Եթէ բանւորները ցանկանում են իրանց իրաւունքները պաշտպանել, նրանք պէտք է անվրէպ իմանան այն բոլոր խարդախութիւնները, որ կարող են անել նրանց դէմ ժողովրդի թշնամիները: Եւ ոչ միայն պիտի անգիր իմանալ մեր բոլոր պատմածները, այլ և, ինչպէս ասացինք, պէտք է հսկել ընտրութիւններին ամբողջ ժամանակ, որպէս զի մի ուրիշ նոր բան չը հնարեն խարդախութեան մէջ կատարելագործութեան հասած վարպետները: Ճիշտ է, դա մի քիչ դժուար ու տաղտկալի գործ է, բայց վերջը տես թէ ո՛րպիսի ուրախութիւն կը լինի, երբ, քո գիտակցութեան ու աչալրջութեան շնորհիւ, թոյլ չես տայ, որ քո և քո դասակարգի շահերը փառաված լինին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դերբենդ, ապրիլի 10-ին: Ապրիլի 9-ին պատարագից յետոյ, նախագահութեամբ գործակալ Աբրահամ քհն. Սպանդունեանցի, հայոց դպրոցի դահլիճում վերջապէս կայացաւ ծխականների ժողովը: Սրանով չորրորդ անգամն էր, որ գործակալը հրաւիրում էր, բայց ժողովրդի բացակայութեան պատճառով ժողովը յետաձգվում էր:

Նախագահը բացելով ժողովը, ասաց, որ ժողովը պէտք է քննէ նախ ս. Էջմիածնի սինօդի ուղարկած կանոնների ծրագիրը, ապագայ քահանայացուների վիճակի բարւոքման մասին, ապա ծխաբաժանութեան հարցը: Ծխաբաժանութեան հարցը մեզ մօտ կատարեալ պատուհաս է դարձել, որի դէմ շատ անգամ են բողոքել, բայց ժողովրդի պահանջը ճիշտ էլ մնացել է «ձայն բարբառոյ յանապատի»:

Ժողովը լսեց կանոնների ծրագրի բոլոր յօդուածները. եղան վիճաբանութիւններ, ու զանազան թեր ու դէմ կարծիքներ յայտնելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ հարկաւոր է ծրագրի 9-դ յօդուածները փոփոխութեան ենթարկել:

Պէտք է նկատել, որ մեծամասնութիւնը պահանջում էր, որ փոքրաթիւ բնակիչներ ունեցող գիւղերը, որոնք իրարից շատ մօտ են գտնվում, 2 կամ 3 գիւղեր միանան ու մի կրթված քահանայ պահեն (Թեմ. դպ. աւարտ.), իսկ՝ հակառակ դիպվածում, որտեղ գիւղը գիւղից բաւականին հեռու տարածութեան վրա է գտնվում, այդպիսի գիւղերը պէտք է ունենան իրանց քահանան, թեմական դպրոցաւարտ: Վարձատրելու միջոցներ չունենալու դէպքում, օգնութեան պէտք է հասնեն քաղաքների եկեղեցիները ու հարուստ վանքերը: Ծրագրի քննութիւնը երկար տևելու պատճառով, ծխաբաժանութեան հարցը թողնվեց մի ուրիշ ժողովի:

Ցանկալի կը լինէր, որ առաջիկայ ժողովը շուտով հրաւիրվէր ու ժողովրդի պահանջներին բաւարարութիւն տրվէր:

Դարբիման

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

V

Կրթական ֆոնդը (դրամարկղը):

Դպրոցական գործի կանոնաւոր վարումը մեծ ծախս է պահանջում:

Մինչև այժմ դպրոցները պահվել են եկեղեցիներից ստացած օժանդակութեամբ, ուսման վճարով, կտակներով, մասնաւոր նուիրատւութիւններով, հոգաբարձութիւնների ձեռք բերած միջոցներով:

Կրթական հարկ մինչև այժմ գոյութիւն չունէր մեր մէջ, միայն Ներսէս Փոխարքայի հրատարակած «Ժամանակաւոր կանոնները» իրաւունք են տուել հոգաբարձութիւններին կամաւոր հարկ դնել ծխականների վրա, ծխական ընդհանուր ժողովների որոշմամբ:

Ինչպէս տեսնում էք, այս բոլոր եկամուտները շատ անհաստատ և երերուն են.—այսօր կան, վաղը չը կան: Ծխական հարկը դեռ ժո- [illegible] համարում ծրագրել հետևեալը:

Ամենից առաջ պէտք է խստօրէն և անդառնալի կերպով որոշել եկեղեցու տուած օժանդակութեան չափը: Ազգը պէտք է իմանայ, թէ ինչ է տալիս եկեղեցին կրթական գործի համար: Եկեղեցին պէտք է բանայ իր դաւթարները և հաշիւ տայ մեզ: Մենք գիտենք, որ եկեղեցին խոշոր կալուածքներ ունի, որ հոգևորականութիւնը լաւ չէ շահագործում և ուրեմն նրանք արդիւնք չեն բերում: Բայց գիտենք նոյնպէս, որ կան և ուրիշ կալուածքներ, որոնք որոշ եկամուտ են բերում, կան եկամտի բազմատեսակ ուրիշ աղբիւրներ ևս: Պէտք է ժողովուրդը իր պատգամաւորների միջոցով մօտից ծանօթանայ եկեղեցապատկան կալուածների, գոյքերի և եկամուտների հետ և ճշտօրէն որոշէ դպրոցներին յատկացնելի մասը:

Այս խնդրի արմատական լուծումն այն կը լինէր, որ եկեղեցապատկան կոչված կալուածքները գրաւվէին յօգուտ ազգային կրթական պէտքերի. սակայն մեզ թւում է, թէ արդի հանգամանքներում դեռ վաղաժամ է այդ խնդիրը յարուցանել: Կան որոշ քաղաքական տեսակէտներ, կայ և ձևական կողմը, որ այժմ տիրող անիշխանական մօմենտում հաւիւ թէ հնարաւոր կացուցանէ այդ խնդրի լուծումը: Դա մի բարդ հարց է, որը մեր կարծիքով, կախված է այն հանգամանքից, թէ ինչ քաղաքական ձևի է յանգելու Ռուսաստանի ազատարար շարժումը: Օրինակ, հենց այն հարցը, թէ ապագայ կառավարութիւնը (կամ սահմանադրութիւնը) կատարելու է և ինչ ձևով հողի էկսպրօպրիացիան, մի բան, որը մտնում է առաջաւոր կուսակցութիւնների ծրագրի մէջ զանազան հասկացողութեամբ:

Մի բան կարելի է, թւում է, հաստատօրէն ասել, այն՝ որ հողային կնճռոտ խնդիրը մօտ ապագայում կը դրվի Պետական Դումայի առաջ, բայց թէ ինչ որոշում կը կայանայ դրա վերաբերմամբ—այդ դժուար է գուշակել:

Ուստի մենք չենք ուզում շօշափել այս խոշոր հարցը, թողնելով ապագային որոշելու մեր բանիմաց դիրքը: Իսկ առ այժմ համագումարի մէջ ժողովրդի պատգամաւորները պէտք է պահանջեն հոգևոր իշխանութիւնից եկամուտների և կողմնակի հասոյթների ճիշտ հաշիւը, և համաձայնութեան գան նրա հետ կրթական գործին յատկացնելիք օժանդակութեան մասին:

Եկեղեցու տուած օժանդակութիւնը չը պէտք է կամաւոր և պայմանական լինի, այլ մշտական և անփոփոխ: Այդ նպատակով հարկաւոր է, որ որոշված գումարը դպրոցն ստանայ ամեն պարագաներում, այսինքն անկախ այն հանգամանքից թէ նուազե՞լ են եկեղեցու եկամուտները թէ ոչ, կամ աւելացե՞լ են հոգևորականութեան պէտքերը թէ ոչ:

Դպրոցի երկրորդ և գլխաւոր եկամուտը կը կազմվի ծխական տուրքերից: Մենք յիշեցինք արդէն Փոխարքայի «Ժամ. կանոնների» 4-դ կէտի մասին, որով իրաւունք է տրվում որոշ հարկ դնել ծխականների վրա: Այս իրաւունքից պէտք է լայնօրէն օգտվել և ընդարձակել: Ու կամաց-կամաց հայ ժողովուրդը կը ընտելանայ «դպրոցական տուրքին», որը արդէն կը դառնայ մի պարտաւորութիւն ամեն հայի համար: Գուցէ դժուար չի լինի հէնց իսկոյն ընդարձակել Փոխարքայի տուած իրաւունքը և այդ տուրքը կամաւորից դարձնել հարկադիր: Այս հարցը հեշտութիւնով կը լուծվի, երբ մեզ մօտ ևս կը մտցվեն զեմստվօյական կազմակերպութիւններ: Ինչևիցէ դպրոցական հարկ սահմանելու խնդիրը պէտք է այսպէս թէ այնպէս որոշվի, որովհետև դա կը տայ խոշոր գումարներ, որոնք և կը կազմեն ազգային դպրոցական ֆոնդի մեծ մասը:

Երրորդ խոշոր աղբիւրն է ուսման վճարը, որը պէտք է հաւասար լինի որոշ տիպի բոլոր ուսումնարաններում և վերանայ այն խայտառակ անհաւասարութիւնը, որ մի ուսումնարանում աշակերտը վճարում է տարին 5 րուբլի, իսկ միւսում 27 ր.: Ուսման վճարները նոյնպէս պէտք է գանձվեն թեմական դպրոցական գանձարանում: Եթէ Աստուած տայ, դրամարկղը ուրիշ հարուստ աղբիւրներ ձեռք բերի, ի հարկէ, այն ժամանակ կընդունվի ընդհանուր, ձրի, պարտադիր ուսումը: Բոլոր պետութիւնների մէջ, կառավարութիւնը որոշ գումար է յատկացնում նախնական դպրոցների օգտին, քանի որ ընդհանուր պետական շահերն այդ են պահանջում: Բելգիայում ժողովրդական ուսումնարանի ծախքի $^1/_6$ մասը տալիս է տէրութիւնը, Անգլիայում կառավարութիւնը 10 շիլինգ է վճարում իւրաքանչիւր աշակերտի համար, բացի այդ՝ նա դպրոցներին առանձին օժանդակութիւն տալիս է ընդհանուր կրթական ծախսերի $^1/_{10}$-ը, Սպանիայում $^1/_5$-ը, իսկ Պորտուգալիան համարեա կէսը: Ամերիկայում կայ տեղական հարկ և ընդհանուր շտատային (նահանգային) հարկեր: Ֆրանսիայում պետական օժանդակութիւնը երկու անգամ գերազանցում է համայնքների տուրքը: Շվէյցարիայում, (շատ կանտոններում) կանտոնային վարչութիւնները լայն օժանդակութիւն են ցոյց տալիս դպրոցներին, հոգալով ընդհանուր ծախսի $^1/_2$—$^3/_4$-ը: Մինչև անգամ Ռուսաստանի ողորմելի ժողովրդական ուսումնարանների բիւջէի $^1/_{10}$-ը հոգում է պետական գանձարանը (տալով $1^1/_2$ միլիոն րուբլի):

Այսպէս ուրեմն հայ դպրոցական վարչութիւնը կարող է որոշ սուբսիդիա սպասել նաև մեր կառավարութիւնից: Եթէ մինչև այժմ լուսավախ բիւրոկրատիան ամեն կերպ խեղդել է այլազգիների ինքնուրոյն կրթութիւնը, այսուհետև, երբ կարգերը փոխւում են, պէտք է յուսալ, որ նա ևս կը հետևի միւս պետութիւնների օրինակին և կը օժանդակէ ժողովրդական լուսաւորութեան գործին:

Կառավարութիւնը օժանդակիչ հանդիսանալով ժողովրդական կրթութեանը անշուշտ որոշ միջամտութիւն կը պահանջէ մեր դպրոցի մէջ: Թէ ինչ ձևով կարտայայտվի այդ միջամտութիւնը—դժուար է գուշակել: Գուցէ դա կը լինի ինսպեկցիա կամ կօնտրօլ: Յամենայն դէպս ազատամիտ մի կառավարութեան մասնակցութիւնից, նոյն իսկ վերահսկողութիւնից վտանգ չենք սպասում: Ինչևիցէ ապագայում կը պարզվի այդ ամենը և մենք [illegible]

Այս բոլոր գումարներից կը կազմվի կրթական դրամարկղ, որ կը պահվի Թեմական Վարչութեան կօնտրօլի տակ:

Դպրոցական Դրամարկղը, ինչպէս հասկացվում է մեր նախընթաց յօդուածներից, պէտք է ծառայէ ամբողջ թեմի կրթական կարիքներին: Նրանով կը պահպանվեն թեմիս բոլոր տեսակի ուսումնարանները թէ տարրական և թէ միջնակարգ.—և կը բացվեն այնպիսիներ դպրոցազուրկ տեղերում: Ուրեմն բոլոր գումարները ձուլվում են և կազմում կրթական ազգային ֆոնդ: Շատ փող տուող եկեղեցին և համայնքը քիչ տուողից աւելի իրաւունք չի ունենայ: Կրթական Վարչութիւնը բոլոր գումարները ըստ տեղական կարիքների է գործադրում, անկախ այն հանգամանքից թէ ո՛ր քաղաքից և ո՛ր գիւղից ինչքան գումար է մտել կասսան:

Բայց այդ ընդհանուր տուրքից, համայնքները կարող են առանձին դպրոցական գումարներ ունենալ, որ կը գործադրեն իրանց ցանկութեամբ, ինչ կրթական գործի համար էլ կամենան իրանք:

Օրինակ, մի քաղաք, որոշ հարկ մուծնելով ընդհանուր կրթական ֆոնդը, ստանում է մի որոշ տիպի միջնակարգ դպրոց, բայց ցանկանում է ունենալ և ուրիշ տիպի դպրոց: Ընդհանուր դրամարկղը գտնում է, որ իր միջոցները թոյլ չեն տալիս այդ քաղաքում երկու տիպի դպրոց ունենալ: Այդ ժամանակ քաղաքը կարող է առանձին գումարներ գտնել երկրորդ դպրոցը պահելու համար:

Այդպիսի տեղական յատուկ գումարները չեն մտնում ընդհանուր դրամարկղի մէջ, այլ պահվում են նոր դպրոցի վարչութեան ձեռքում: Իսկ եթէ հասարակութիւնը ցանկանայ կարող է ի հարկէ մուծնել կրթական ֆոնդի մէջ անձեռնմխելի յատուկ գումար, որ կը գործադրվի միմիայն յիշած դպրոցի պէտքերի վրա:

Յատուկ գումարները կազմվում են նաև այն գումարներից, որոնք յանձնվում են դպրոցական վարչութեանը որոշ նպատակով (օր. միմիայն հողագործական միջնակարգ դպրոցներ հիմնելու նպատակով), նոյնպէս և այն գումարները, որոնք մի որոշ նպատակի համար են տրվում, օրինակ ուսումնականներ արտասահման ուղարկելու, կամ թանգարաններ ու գրադարաններ հիմնելու համար:

Այս բոլոր գումարները չեն կարող ծախսվել ըստ վարչութեան հայեցողութեան, այլ յատկապէս այն նպատակի վրա, որ մատնանիշ է արել նուիրատուն:

Առաջարկութեանս նպատակն է, որ 1) կրթական գործը ընդհանուր ազգային բնաւորութիւն ունենայ և 2) որ միևնոյն ժամանակ ամեն համայնք, իր պարտքը դէպի ընդհանուր լուսաւորութեան պէտքերը կատարելով հանդերձ, միանգամայն անկախ լինի իր սեփական տեղային կրթական գործը աւելի զարգացնելու.

Այսպիսով ամեն համայնք և ամեն անհատ միանգամայն անկախ կը լինի իր գործունէութեան մէջ: Նա կը բանայ իր ցանկացած տիպի ուսումնարանները և իր ցանկացած եղանակով կը նպաստէ տեղային կրթական գործին:

Եւրոպայում շատ տեղ այսպիսի աւտօնօմիա տրված է համայնքներին, և այդ բանը շատ առաջ է տարել կրթական գործը:

Այստեղ առաջ է գալիս, մեր կարծիքով, այն շատ կարևոր խնդիրը, թէ այդ մասնաւոր (առանց դրամարկղի օժանդակութեան հիմնված) ուսումնարանները ինչ տեսակ յարաբերութեան մէջ պէտք է լինեն Դպրոցական Վարչութեան հետ: Արդեօք նրանք, տնտեսաբար անկախ լինելով, անկախ են նոյնպէս և ուսումնական հսկողութիւնից: Այս խնդիրը շատ դժուար է որոշել: Մի կողմից ցանկալի է, որ այդպիսի ուսումնարանները միանգամայն ազատ լինեն այդ հսկողութիւնից, բայց միւս կողմից երկիւղ կայ, մի գուցէ նրանք չափազանց շատ շեղվեն մշակված ծրագրից ի վնաս գործի: Ուստի, մեր կարծիքով, գոնէ առ այժմ անհրաժեշտ է, որ ուսումնական մասում նրանք ևս ենթարկված լինեն Կենտրոնական և Թեմական Վարչութիւնների հսկողութեանը:

Ինչ վերաբերում է այն դպրոցներին, որոնք բացված են համայնքի կամ մասնաւոր անձանց գումարներով, բայց ինչ-ինչ պատճառներով անկարող են իրանց գոյութիւնը պահպանելու առանց նպաստի Կրթական Ֆոնդի կողմից, այդպիսիները մտնում են ընդհանուր դպրոցական կազմակերպութեան մէջ, ուրեմն և ենթարկվում են Կենտրոնական ու Թեմական Վարչութիւնների իրաւասութեան:

Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Ապրիլի 16-ին

Ապրիլի 11-ին կայացած քաղաքային խորհրդի նիստում քաղաքագլուխ Վ. Ենիկոլոփեան առաջարկեց՝ միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առաջ Մարիինսկի 2-րորդաց դպրոցը իգական պրօգիմնազիայի վերածելու և ներկայ Մարիինսկի դպրոցին կից հիմնել հոգաբարձական խորհուրդ: Ձայնաւորների ժողովն ընդունեց այս առաջարկութիւնները: Սղնախից պատգամաւորներ ընտրվեցան՝ Վ. Ենիկոլոփեան՝ ս. Կարապետ եկեղեցուց և Յար. քհն. Տէր-Նիկողոսեան՝ ս. Գէորգ եկեղեցուց: Սրանք պէտք է գնան Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու:

Ապրիլի 12-ին վախճանվեց Զաքար Աքիմեան: Հանգուցեալը մի համեստ, հեզ, խաղաղ մարդ էր՝ ընդունակ արձագանք տալու բոլոր բարի գործերին: Հանգուցեալի հայրը՝ Յարութիւն Աքիմեանը՝ 1848 թ. շինել է ս. Կարապետ եկեղեցուն կից մի մատուռ, որտեղի մոմավաճառութիւնից զուտ արդիւնք է ստացվում մօտ 200 ր. տարեկան: Իրանց երախտիքի համար հանգուցեալի ծնողները թաղված են այդ մատուռի առաջ: Հանգուցեալ Զաքար Աքիմեանը իր հօր պէս բարեպաշտ մարդ էր: Մեր խաւար քաղաքում, որտեղ շատ չեն [illegible], օգտաւէտ մարդիկ, շատ ցաւալի է Զաքար Աքիմեանի մահը: Դրանով մեր հասարակութիւնը զրկվեց մի լաւ անդամից:

Յ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ՍՏԱՒՐՈՊՈԼԻՑ

Մարտի 26-ին

Յայտնի դերասան Արմէնեան՝ իր ամուսնու—տ. Դուրեան-Արմէնեանի և դերասանուհի օր. Արուսեակի հետ այցելեցին մեր քաղաքը և տեղական սիրողների օգնութեամբ երկու ներկայացում տուին: Մարտի 19-ին ժողովրդական տանը ներկայացրին «Դամոկլեան սուր» դրաման (Է. Տէր-Գրիգորեանի) և «Ադամ և Եւա» վօդեվիլը. իսկ 23-ին հայոց ուսումնարանի դահլիճում ներկայացրին Շիրվանզադէի «Եւգինէն» և «Հացի ու ջրի յուսամ» անունով մի վօդեվիլ: Բացի դրանից՝ պ. Արմէնեան կարդաց ոտանաւորներ Դուրեանից, Ալիշանից և Պէշիկթաշլեանից («Տրտունջ», «Բամբ որոտան» և այլն): Երկու ներկայացմանն էլ Արմէնեան արտիստօրէն կատարեց իր դերերը և գեղարուեստօրէն կարդաց ոտանաւորները: Գեղեցիկ էին նոյնպէս և յարգելի դերասանուհիները:

Բացի դրանից, մարտի 22-ին, դարձեալ ժողովրդական տանը, պ. Արմէնեան, ռուս դերասանների և սիրողների մասնակցութեամբ, ներկայացրեց Դիաչենկօի յայտնի «Гувернеръ» կատակերգութիւնը, որի մէջ Ժօրժ Դորսիի դերը ֆրանսերէն և ռուսերէն կատարեց ինքը Արմէնեանը: Ներկայ եղող ձեռնհաս ռուսներից շատերը, որոնք տեսել են նոյն դերի մէջ յայտնի կատարողների, գովասանքով են խօսում պ. Արմէնեանի մասին և շատերից բարձր են դասում. իսկ նոյն դերում Արմէնեանին տեսնողները վկայում են, որ հիմա շատ է կատարելագործվել:

Սակայն երկու անգամն էլ հասարակութիւն քիչ կար ժողովրդական տանը: Միայն վերջը գնահատեցին մեր համակրելի հիւրերին և վերջին ներկայացման ժամանակ շտապեցին լցնել հայոց ուսումնարանի դահլիճը: Այս վերջին ներկայացմանը տեղական հայ սիրողները մի-մի ընծայ տուին պ. Արմէնեանին և օր. Արուսեակին, իսկ տ. Դուրեան-Արմէնեան մի ընծայ ստացաւ գիմնազիայի հայ աշակերտական մի խմբից:

Արմէնեան և իր ամուսինը ուղևորվում են Աստրախան՝ ներկայացումներ տալու: Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն:

Սալլիմեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, ապրիլի 7-ին

Արսէն վարդապետը պատասխանում է նամակիս և ասում, որ ես օգտվելով «Մշակի» ընթերցողների գործին անծանօթութիւնից «սուտ եմ ասում թէ Վեհափառը ներել է նրան, չի ներել, այլ «ուղղել է Սինօդի սխալը»: Դնում եմ այստեղ Նորին Սրբութեան կոնդակի պատճէնը, որ ընթերցողը դատէ թէ դա յանցանք նշրող բնաւորութիւն ունի թէ՞ սխալ ազդող.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... հոգեշնորհ տ. Արսէն վարդապետի Ղլտճեան ծանուցանեմք.

«Ընկալ մեր զհեռագրական միջնորդութիւնս խորհրդոյ միաբանեալ հոգաբարձութեան եկեղեցական-ծխական դպրոցաց տեղւոյդ, խորհուրդն խնդրէ ի մէնջ թեթեւացուցանել զպատիժն՝ զեղեալսն ի վերայ Ձեր Հայրապետական կոնդակաւ մերով ի 28 փետրվարի ամսոյս թ. 223, այլ և ի նկատ առեալ մեր զհայցուած Ձեր վասն ներման զարտայայտեալ ի հեռագրի Ձերում ի 10 այսր մարտի, այսու հայրապետական կոնդակաւ մերով ոչ եթէ թեթեւացուցանեմք զպատիժն զեղեալսն ի վերայ Ձեր կոնդակաւ մերով թ. 223, այլ խապառ բառնամք զայնոսիկ ի Ձէնջ, վերստին հաստատելով զՁեզ ի պաշտաման փոխանորդութեան վիճակին հայոց Ալէքսանդրապօլու մինչ ցառանձին տնօրէնութիւն Մեր։ Թ. 280. ի 11 մարտի 1906 ամի ի ս. Էջմիածին»։ (Ստորագրութիւն)

Ես այս կոնդակի բովանդակութիւնը բնորոշել էի աւետարանական խօսքերով՝ «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (Մարկ. գլ. Բ. 5)։ Մնացածը թողնում եմ յարգելի ընթերցողներին եզրակացնելու։

Ես ասել էի նաև, որ քննադատութեան անուան տակ հայհոյում են Սինօդին և նրա անդամներին. իսկ պ. Ս. Տիգրանեանը «Արշալոյսում» և Արսէն վարդապետը «Մշակում» նորից շարելով իրանց գործածած բառերը, զարմանալով բացականչում են. միթէ սա հայհոյանք է։ Այդ բանն ինձ յիշեցնում է անցեալից մի դէպք. 1892 թուին ճամբորդում էի Ղամարլուի շրջակայ գիւղերը, ի միջի այլոց իջևանեցի մի Թուրքի գիւղ և տեղեկութիւններ էի ժողովում նրանց նիստ ու կացի մասին։ Խօսակցութեան ժամանակ Թուրքերից ոմանք արտասանում էին այնպիսի բառեր ու դարձուածներ, որ գրականութեան մէջ գործ չեն դնում։

Մի քանի անգամ լսելուց յետոյ նկատեցի նրանց, որ այդպիսի բառերի, դարձուածների գործածութիւնը անվայել է, հայհոյանք է։ Թուրքերը զարմացած ինձ պատասխանեցին. «Ինչու են անվայել, մենք հօ դին-ժասսաբ չենք հայհոյում»։ Տեսնելով որ հայհոյանքը նրանք ուրիշ կերպ են հասկանում քան ես, լռեցի։

Այժմ գրանցն է. ես կարծել եմ թէ իր նման մարդուն տգէտ, յիմար, երեխայ, չարամիտ և այլն անուանելը հայհոյել է նշանակում. բայց եթէ նրանց խօսակցութեան և գրութեան ձևն է այդ, եթէ նրանք կարծում են թէ այլ ձևով, դէպի ուրիշները յարգանքով խօսելը պարսկական շողոքորթութիւն ու հաճոյակատարութիւն է, թող շարունակեն, լաւ ձև են ընտրել, գուցէ և շատ ընթերցողներ էլ ունենան...

Մատթէոս վարդապետ

Խանքենդ-աւան, ապրիլի 4-ին

Ալիղուլի գիւղը գտնվում էր Զանգեզուր գաւառում, բայց պատկանում էր Ղարաբաղի թեմին և գտնվում էր Խանքենդի գործակալութեան շրջանում։ Ալիղուլի գիւղը ըստ մօտաւորապէս 180 ծուխ էր և շրջապատված բազմաթիւ աւազակաբարոյ քրդական գիւղերով։ Հարևան հայ գիւղերը հեռու են 30—50 վերստ հեռաւորութեամբ, և որ որևէ դժբաղդ դէպքում անկարող օգնութեան հասնել։

Անցեալ սեպտեմբեր ամսին քրդերը յարձակվեցին այդ գիւղի վրա և անհօգին վնասներ հասցրին բնակիչներին՝ կոտորելով, աւերելով, հրդեհելով և թալանելով ամեն ինչ։ Օգնութիւն հայերի կողմից նրանք անկարող եղան ստանալ, որովհետև, ինչպէս վերև էլ արձանագրեցի, շրջապատված են բազմաթիւ քրդական գիւղերով, այնպիսի քրդերով, որոնք զարգացած են միայն աւազակութիւնների, աւարառութիւնների և աւերումների մէջ։ Ալիղուլի գիւղի փախուստով կենդանի մնացածները, որպէս զի նորից չենթարկվեն կոտորածի, որոշում են ընդմիշտ թողնել իրանց հայրենիքը...։ Նրանց գաղթին բաւական նպաստում է մի կոզակ սպայ, որ մի քանի կոզակներով պահապան է նշանակված ավերված գիւղին։ Ալիղուլին դատարկվում է յաւիտենապէս։ Գիւղացիները միասին բարև տալով իրանց նախահայրերի շիրիմներին, պաշտած եկեղեցուն, հանդ ու անդաստաններին, [illegible]

Ալիղուլեցիները ցրվում են Շուշու գաւառի հայ գիւղերում։ Սրանցից մի մեծ խումբ եկած է Խանքենդի։ Սրանք կազմում են 48 ծուխ և այսօր գտնվում են շատ ծանր, անտանելի և աննկարագրելի կացութեան մէջ, որովհետև նրանց եղած-չեղածը Ալիղուլում խոպառ թալանված է եղել, հազիւ կարողացել են փախչելով ազատվել։ Խանքենդցիները այդ 48 ծխին բնակարաններ տուին, նոյնպէս և վառարաններ՝ սենեակները տաքացնելու, որովհետև դրանք եկան նոյեմբեր ամսին։ Ուտելիքի և հագնելիքի կողմից նրանք դարձեալ օգնութեան հասան, բայց շուտով Խանքենդին էլ ընդհարում ունեցաւ Թուրքերի հետ, այն ժամանակ կանգ առաւ առևտուրը, կեանքը տեղացի հայերի համար էլ դարձաւ շատ ծանր, ուտելու հաց ոչ ոք չէր կարողանում ճարել։ Այս հանգամանքում Շուշու նպաստամատոյց յանձնաժողովը ալիղուլեցիներին տուեց 500 րուբլի նպաստագրամ, որ նրանց կերակրեց գրեթէ մի ամիս և այսօր նրանք դարձեալ մատնված են քաղցի և մերկութեան։ Գործ բոլորովին չը կայ, լինի, նրանք կաշխատեն, շատ աշխատասէր են, բայց ոչ եզներ ունեն և ոչ սերմ՝ վարելու, այնպէս որ խեղճերը ձեռները ծոցերում մնացել են պարապ։

Թիֆլիսում ապրող ղարաբաղցիները ուղարկել են Խանքենդի 1500 պուդ ալիւր սովեալների համար և 1000 ր. փող Շուշի Ներսէս վարդապետին, եզների և սերմացուի համար։ Շուշու նպաստամատոյց յանձնաժողովի կողմից եկան երկու լիազօրներ, այստեղ, Խանքենդում, կազմեցին մի ենթայանձնաժողով, որ ստացվող նպաստների համար կարգադրութիւններ և բաժանումներ անէ ամբողջ Խաչէն գաւառի տառապող ժողովրդի համար։ Երկու լիազօրները, իրանց իրաւունքով, անկարող եղան այն 1500 պուդ ալիւրից և 1000 ր. փողից ալիղուլեցիներին բաժին տալ, առարկելով, որ դրանք արդէն 500 ր. ստացած են, բայց երկար ընդդիմախօսութիւնից յետոյ, խոստացան, եթէ ալիւրից աւելորդ մնայ, այդ աւելորդը տալ ալիղուլեցիների ամենածայրահեղ կարօտեալներին։ Բայց արդեօք աւելորդ կը մնայ, կարիքը այնքան մեծ է։

Զատկական տօներին ես անկարող եղայ այն ալիւրից ալիղուլեցիների իւրաքանչիւր ծխի մի մի պուդ բաժանել, գոնէ կուշտ փորով լոկ հաց ուտեցնելու համար։ Ալիւր պահողը անկարող եղաւ ալիւր բաց թողնել, պատճառաբանելով, որ Շուշում իրանց նկատել են հաց թխելու համար բաց թողած մի երկու քսակ ալիւրի համար։ Այսպէս այն ալիւրը և փողը մնում են դեռ անգործադրելի։ Երբ կը բարեհաճեն Շուշուց մարդիկ գալ, կարգադրութիւն անելու՝ յայտնի չէ։

Ալիղուլեցիների վիճակը շատ ծանր է, նախ նրանք անգործ են և քաղցած, ապա կատարեալ մերկ, անյոյս և տրտում վիճակում։ Երեխաները շրջում են ոտաբոբիկ, հիւանդութիւնն (հաց և ծաղիկ) էլ մի կողմից է նրանց դէմ հալածանք բարձրացրել։

Արդ՝ յարգանքով խնդրում եմ մարդասէր մարդկանց և տիկիններին օգնել նրանց ինչով որ կարող են, լինի դրամով, թէ հանդերձեղէններով (առաւելապէս երեխաների) մի և նոյն է, որպէս զի սրանք էլ կարողանան ապրել և մոռանալ իրանց թշուառ անցեալը։ Բոլոր նուէրների մասին ժամանակին հաշիւ կը տրվի։ Իմ հասցէս՝ Въ уроч. Ханкенды.

Գործակալ շրջանակին Խանքենդու՝

Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեան

Կոռնիձոր, (Զանգ. գաւ.) մարտի 19-ին

Ձեր պատուական թերթում տեղ շնորհեցէք մեր սրտաբուղխ շնորհակալութիւնը յայտնելու համագիւղացի (բագուաբնակ) Բախշի-բէգ Սարիբէգեանցին, որ ի կատար ածեց տասը տարի առաջ հանգուցեալ Իվան Պավլովիչ Սարիբէգովի կտակը, 4000 ր. յատկացրած էր իբր օժանդակութիւն եկեղեցի շինելու գործին և 1000 ր. էլ եկեղեցու բակում դպրոց կառուցանելու համար։

Պարտք ենք համարում, տարիներով եկեղեցու երես չը տեսած հայերս, ըստ հայրենի սովորութեան, հանգուցեալ բարեգործի ոսկերաց անխռով հանգիստ մաղթելու և կտակակատար Բախշի-բէգին շնորհակալութիւն յայտնելու։ Շնորհակալութիւն նաև պ. Պօղոսս Աբրահամեանցին, որ իր սեպհական հողից, գիւղամիջի յարմարաւոր մասում, եկեղեցու կառուցման համար տեղ է յատկացրել։

Շնորհիւ Սարիբէգեանների մենք այժմ եկեղեցի ունենք, (ս. Յովհաննէս) որ և ամսիս 17—18-ը մեր գթառատ և բարեպաշտօն հայր Ն. վարդապետ Մելիք-Թանգեանի կողմից արժանացաւ մեծահանդէս օծման։

Մեր ջերմ փափագն է, որ իրագործվէր նաև դպրոցի շինութիւնը, նոյն եկեղեցու բակում, որի օգտակարութիւնը մեր տգէտ կեանքում անուրանալի է։

Եկեղեցու օծման ներկայ և հանդիսատես էին եկած մի քանի Թուրքեր, գիւղացիների հրաւէրով։

Ի դիմաց հասարակութեան՝

Սաղանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիս վերադարձած Փոխարքայի զինուորական մասի օգնական գեն. լէյտ. Ե. Դ. Մալամա, տկարութեան պատճառով, դեռ ևս չէ ներկայացրել Փոխարքային իր զեկուցումը Շուշու և Զանգեզուրի գաւառներում կատարած իր ճանապարհորդութեան հետևանքների մասին։

Փոխարքայի ոստիկանական մասի օգնական գեներալ-լէյտենանտ Շիրինկին Պետերբուրգում ներկայացել է կոմս Վիտտէին և ներքին գործերի մինիստր սենատոր Դուրնովոյին։

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը թոյլատրել է պօստ-հեռագրական պաշտօնեաներին ապրիլի 29-ին ժողով գումարել խորհրդակցելու իրանց պրոֆէսիոնալ մի քանի հարցերի մասին։

Ինչպէս լսում ենք, Հալաբարում գտնված գաղտնի տպարանի ու ռումբեր պատրաստելու լաբորատորիայի գործի հետ մասնակցութիւն ունեցողները զինուորական դատաստանի են ենթարկվելու։

Ապրիլի 20-ին, ցերեկվայ մօտ ժամը 11-ին 4-րդ քաղաքամասում՝ Բեբուդովսկի և Պասկևիչի փողոցների անկիւնում՝ մի անյայտ մարդ յարձակվեց նախկին վաճառականների աւագ Եգոր Աւագովիչ Դուդովի վրա և սրով կրծքին խփելով, տեղն ու տեղը սպանեց։ Չարագործը փախաւ և անյայտացաւ։ Դուդովի դիակը ազգականները տարան իր բնակարանը։

Նպաստամատոյց յանձնաժողովի գանձապահ պ. Ալ. Մելիք-Ազարեանց խնդրում է մեզ [illegible] 2000 րուբլի ի նպաստ անյայտ [illegible]։

Արեշի վնասված ժողովրդին բաժանելու համար Նպաստամատոյց յանձնաժողովը ստացել է Տաճկաստանի սերմավաճառ ընկերութիւնից 20 տուփ բոժոժի սերմ։

Աղէտեալների օգտին ստացանք՝ 1) Բագուից—Յովհաննէս Ղազանչեանից 3 ր. 2) Մէշքինշէրից—ազգային սնդուկի միջոցով հանգանակած 200 ր., 3) մի ոմնից 10 ր., 4) Բագուից—Յ. Սարգսեանի միջոցով պ. Ներամիշեանի ծառաներից և կողմնակի ծառայողներից 14 ր., 5) Յովհ. Նիկողոսեանից 15 րուբլի։

Թիֆլիսի քաղաքային Դումայի ձայնաւոր Ն. Ի. Թամամշեանը մի գրաւոր յայտարարութիւն է ուղարկել վարչութեանը, որտեղ նա գրում է. քաղաքում լուրեր են պտտում, որ իբրև թէ քաղաքային վարչութեան III բաժանմունքում արխիտեկտորներից մէկը կաշառքներ է վերցնում, և այդ բանը հաստատվում է ստացված տեղեկութիւններով։ Բանը նրանումն է, որ ճանապարհների հաղորդակցութեան ինժեներ Մարգօլիսը մեղադրում է քաղաքային վարչութեան արխիտեկտոր Հախնազարեանին 1000 րուբլի կաշառք ուզելու համար, և ներկայացնում է մեղադրութիւնը հաստատող ապացոյցներ։ Վարչութիւնը ուզում է խեղդել այդ գործը և ձայնաւոր Թամամշեանը պահանջում է, որ վարչութիւնը քննութիւն սկսէ այդ գործի համար և պատասխանատուութեան ենթարկէ զրպարտութեան համար ինժեներ Մարգօլիսին, իսկ եթէ արխիտեկտոր Հախնազարեանը մեղաւոր լինի, նրան պատասխանատուութեան ենթարկել, զեկուցանելով Դումային։ Այնուհետև քաղաքում տարածված լուրերից երևում է նոյնպէս, որ քաղաքային տեխնիկ Ստեփանեանցը մեղադրվում է քաղաքային նիւթերից օգտվելու համար, իբրև թէ վաճառում է իր օգտին։ Այդ գործը քննելիս վարչութիւնը գտաւ, որ Ստեփանեանցի զանցառութիւնների մասին տարածված լուրերը արդարացի են, որ Ն. Ի. Թամամշեանի կարծիքով չը պէտք է լինի. որովհետև Ստեփանեանցը ինքը վկայել է, որ շինարարական բաժանմունքի բոլոր տեխնիկները կաշառքներ են վերցնում։ Այդ վկայութիւնը շատ բնորոշ է և անհրաժեշտ է քննութիւն կատարել։ Ապա ձայնաւոր Թամամշեանը գրում է, որ վարչութիւնը ստեղծում է նոր պաշտօններ, որոնց համար նշանակվում են ոչ թէ գործունեայ, գործին ծանօթ և արդար կարիք ունեցող կանայք, այլ միայն գեղեցկութեամբ աչքի ընկնողները։ Տգեղ, բանիմաց, մի քանի լեզուներ իմացող կանանց համար, որոնք կարող են ստանձնել վարչութեան անդամներից ոչ պակաս պաշտօն, տեղեր չը կան։ Մինչդեռ գեղեցիկ կանայք վարչութեան մէջ ոչինչ գործ չեն կատարում, այլ զբաղվում են միայն ֆլիրտով և այլն։ Այդ բոլորը վերացնելու համար ձայնաւոր Թամամշեանը առաջարկում է հաստատել մի առանձին խորհուրդ որքան կարելի է վարչութեան շատ ծառայողներից կազմված, որին և յանձնել ծառայողների ընդունելութեան, արձակելու, տեղափոխելու, նոյնպէս և նրանց ռոճիկները նշանակելու գործը։

Եարօսլավլի նահանգից Պետերբուրգ եկած քարտաշները, շտուկատուրշչիկները և ատաղձագործները մօտ ժամանակներս մի ժողով են գումարել և վճռել բոյկօտի ենթարկել Պետերբուրգի նոր կառուցվող բանտը։ Նրանք որոշել են. հրաժարվել եթէ կապալառուն հրաւիրէ նրանց բանտի շինութեան համար աշխատելու, մի և նոյն ժամանակ բոյկոտի միտքը քարոզել բոլոր քարտաշների մէջ, թէ բնիկ Պետերբուրգի և թէ գաւառներից ամենայն օր խմբերով եկողների մէջ։ «Р. В.»

Պետերբուրգում ապրիլի երկրորդ շաբաթվայ ընթացքում կալանաւորվել են 25-ից աւելի զինուորներ։ Կալանաւորները գլխաւորապէս գվարդիական գնդերից են։ Միաժամանակ խուզարկութիւններ են կատարվել զօրանոցներում։

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը թոյլ տուեց Մ. Դ. Շերվաշիձէին ապրիլի 25-ին մի համերգ տալու Վրաստանում վնասված վրացիների օգտին։ (Շրոմա)

Ապրիլի 18-ին, գիշերվայ ժամի 11-ին, Թիֆլիսում երեք անյայտ չարագործներ զինված յարձակվում են գործել 7-րդ քաղաքամասում գտնվող Սկանդելի տան վրա, Նորէյսկի փողոցում № 1։ Չարագործները ներս են մտել Թիֆլիսի բնակիչ Եգոր Գաւրիլովիչ Գէուրկովի բնակարանը, որտեղ այդ ժամանակ եղել են միայն նրա մայրը՝ Փեփելը և քոյրը՝ Աննան և սպառնալով նրանց ատրճանակներով ու խանջալներով, նրանցից մէկը մօտեցել է սեղանին և դուրս քաշելով նրա արկղը, որտեղ պահվում էին փողերը, վերցրել 1400 րուբլի։ Յետոյ դուրս գալով բակը՝ ընկերոջ հետ ատրճանակ պարպեցին, որի ձայնից դուրս վազեց դռնապանը և սկսեց սուլոցներով օգնութեան կանչել քաղաքապահներին։ Չարագործները սկսեցին փախչել այս ու այն կողմ, բայց ճանապարհին նրանցից մէկին բռնեց քաղաքապահը։ Բռնվածը Թիֆլիսեցի Յարութիւն Ջուլաբովիչ Աւետրովն է և որին Գէուրկովի քոյրը ճանաչել է իբրև գողերից մէկը։ Կալանաւորի մօտ չէ գտնվել ոչ փող և ոչ ատրճանակ, բայց նրա փախուստի ճանապարհին գտնվել է ատրճանակը։

Պետերբուրգի նախնական բանտարկութեան տան մէջ ապրիլի 13-ին տեղի է ունեցել հետևեալ միջնադէպը։ Իր ամուսնուն այցելութեան եկած տ. Պեշխոնովան իր հետ բերել էր և վեց տարեկան աղջկան։ Տեսնելով հօրը, փոքրիկը փաթաթվեց հօր վզովը և ապա նստեց նրա ծնկների վրա։ Այցելութեան ներկայ գտնվող ժանդարմական օֆիցէր Հօլշաէվնէ գոռաց նրա վրա. «Չը համարձակվես նստել ծնկների վրա, իջիր»։ «Իսկ ես ուզում եմ հայրիկիս մօտ լինել,» պատասխանեց փոքրիկը, և նստած մնաց ծնկների վրա։ Տղայի պատասխանից զայրացած օֆիցէրը այցելութիւնը վերջացած համարեց, յայտնելով. «Տեսնում ես [illegible] միջնադէպի մասին իմանալով զայրացած հասարակութիւնը բարձրաձայն իր բողոքը արտայայտեց։

Եկամտային հարկը գործադրութեան մտցնելով՝ մտադրութիւն կայ վերացնել բնակարանային հարկը։ «Совр.»

Թուրքական թերթերի ասելով Ուֆա քաղաքում հիմնվում է ուսումնարան մուսուլման աղջիկների համար։ Այդ գործի նախաձեռնութիւնը պատկանում է Ուֆայի մուսուլման վաճառականների աչքի ընկնող ներկայացուցիչներին։

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշ. Չերքէզովի տկարութեան պատճառով, նրա պաշտօնավարութիւնը ստանձնել է վարչութեան աւագ անդամ Կոլէյշվիլը։

Քաղաքային վարչութեան ծառայողներ Մ. Մ. Մատինեանի և ուսանող Ա. Թադէոսեանի մէջ տեղի ունեցած միջնադէպի քննութիւնը յանձնվում է Թիֆլիս քաղաքի ուսանողական կոլլէգիային։

Ադմինիստրացիայի կողմից վաճառելու համար արգելված գրքերի և բրօշիւրների ցուցակները հետզհետէ աւելանում են։ Ապրիլի 15-ին Պետերբուրգում «Жизнь» գրավաճառանոցի տիրոջից ստորագրութիւն առնվեց, որ չը վաճառէ այսուհետև մի շարք սօցիալ-դէմօկրատական բրօշիւրներ, որոնց թւում ի միջի այլոց և Կաուտսկու «Էրֆուրտի ծրագիրը»։

Ապրիլի 14-ին Պետերբուրգում առաւօտվանից սկսեցին գործադուլ անել քաղաքային էլեկտրական տրամվայի Պետրովսկի, Մարիինսկի, Սուխարէվսկի և Սօկօլնիչի գծերի բանւորները։ Գործադուլի շարժառիթը այն է, որ քաղաքային վարչութիւնը արձակեց պաշտօնից մօնտեոր Նովիկովին, փականագործ Վլադիմիրովին, և բանտից նոր ազատված Երօպովին իր պաշտօնում չընդունեց։ Բանւորները պահանջում էին վերընդունել յիշեալ ծառայողներին։

Դիդուբէի խանդակի շինութեան խնդիրը (քաղաքի 8 և 9-րդ մասում) ահա տասնեակ տարիներ է որ ձգձգվում է՝ անտանելի ծանր դժուարութեան մէջ թողնելով իր անբարեկարգ վիճակով այդ թաղի բնակիչներին։ Անձրևի ժամանակ մօտիկ փողոցները (Նիկոլաևսկի, Աւչալի, Սաղի, և այլն) միանգամայն անանցանելի են դառնում երթևեկողների համար, տրամվայի երթևեկութիւնը ևս կանգ է առնում յորդահոս ջրի պատճառով, որ գետակի ծաւալ է ստանում։ Քաղաքը յիշեալ խանդակը (կանալը) շինելու համար յատկացրել է մինչև 20,000 ր., և ձայնաւոր Նիկ. Գրիգորեանի հարցապնդումին այս օրերս՝ թէ երբ պէտք է սկսի քաղաքը բարեկարգելու Դիդուբէի խանդակի շինութիւնը—քաղաքային վարչութեան բացատրութիւնից պարզվում է, որ ներկայումս քաղաքի գանձարանումը փող չը լինելու պատճառով՝ քաղաքը ստիպված է դարձեալ մի առժամանակ յետաձգել խանդակի շինութիւնը։

Ներկայումս մսի գները մեր շուկայում շատ բարձր են և աղքատ դասակարգի համար անմատչելի. այսպէս, օրինակ, առաջին միսը ծախում են մսավաճառները 13 կ. ֆունտը՝ այն էլ երրորդ տեսակը խառնելով, որ ընդհանուր առմամբ 16 կ. աւելի է նստում քիչ թէ շատ ուտելի մսի ֆունտը. ոչխարինը ծախվում է 17—18 կոպ. ֆ., իսկ գառան միսը—25—30 կ.։ Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ ներկայումս Պետերբուրգում մսի պուդը 4 ր. 50 կ. մինչև 5—50 կոպ. է, այսինքն շատ աւելի էժան քան Թիֆլիսումը։ Քաղաքային մսի խանութները փակվելուց յետոյ շատ երես են առել մեր մսավաճառները և կատարեալ կամայականութիւն է տիրում նրանց մէջ։ Նոյնը պէտք է ասել և հացի սակագնի մասին. քաղաքիս ալիւրի պահեստները լիքն են հազարաւոր պուդ ալիւրով, ամեն օր անհօգին քանակութեամբ ալիւր է ներս մտնում քաղաքս, սակայն գները նոյնն են մնում, ինչ որ 2 ամիս առաջ։ Արդեօք երբ պէտք է վերանայ մեր շուկայից այս աննորմալ վիճակը։

Ապրիլի 12-ին Պետերբուրգում բացվել է առևտրի արդիւնաբերութեան ներկայացուցիչների համաժողովը, որին ներկայ են եղել ի միջի այլոց՝ պետական խորհրդի անդամներից Վ. Ս. Տիմիրեազևը, Ղուկասով և ուրիշները։ Այդ ժողովը որոշել է իր պարապմունքների խնդիրը—այն է՝ բերան հանդիսանալը՝ թէ առևտրի և արդիւնաբերութեան շահերի ընդհանրապէս և թէ դրանց առանձին ճիւղերի համար՝ օրէնսդիր, պետական և հասարակական հիմնարկութիւնների առաջ, նպաստել, որ երկրի զանազան մասերում հիմնվեն առևտրի և արդիւնաբերութեան վերաբերեալ օժանդակիչ բաժանմունքներ, կապիտալի և աշխատանքի կանոնաւորելու խնդրի լուծման օժանդակել, հաստատել մրցանակներ, ցուցահանդէսներ, փորձնական կայարաններ, մուզէյում, լաբորատորիա, դպրոցներ, բանուորների համար կուրսեր և նման հիմնարկութիւններ, վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել՝ առևտրի և արդիւնաբերութեան վերաբերեալ, հետախուզութիւններ կատարել, պարբերական հրատարակութիւններ լոյս թողնել և այլն։

ՊԵՏՐՈՎՍԿԻՑ մեզ գրում են.—«Ամսիս 9-ին հայոց դպրոցում տեղի ունեցաւ աշակերտական-մանկական ներկայացում. խաղացին «Համվալլա» և «Կրթութիւնը խաթա չէ, այլ բարիք»։ Ներկայացումը անցաւ շատ աջողակ. խաղացող թէ աշակերտները և թէ աշակերտուհիները շատ լաւ էին պատրաստված և հիանալի կատարեցին իրանց դերերը։ Դահլիճը ծայրեծայր լիքն էր հանդիսատեսներով և ամենքն էլ շատ գոհ մնացին ու լաւ տպաւորութեան տակ հեռացան։ «Էլի երբ կը լինի», «ինչու այդպիսի ներկայացումներ շատ շատ չէք սարքում» հարցմունքներին վերջ չը կար։ Միայն ափսոս որ դահլիճի փոքրութեան պատճառով շատ նեղվածք էր և շոգ։ Ցանկալի է, որ այդպիսի ներկայացումներ [illegible] խաներին և նոյն իսկ հասակաւորներին, մի տեսակ սերտ կապ ես հաստատում են ժողովրդի ու դպրոցի մէջ և այդ կապը դպրոցի առաջադիմութեան համար հարկաւոր պայմաններից մէկն է»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի 7-րդ քաղաքամասում, Կախեթինսկի փողոցում, ապրիլի 17-ին, մօտաւորապէս երեկոյեան ժամի 7-ին Թիֆլիսեցի Օհանէս Զուբարեանը դանակով մահացու կերպով վիրաւորեց Թիֆլիսի բնակիչ Խաչատուր Թառանեանցին, որը Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցը տանելուց անմիջապէս մեռաւ։ Վիրաւորելուց յետոյ չարագործը փախաւ, բայց 7-րդ ոստիկանատան ձեռք առած միջոցներով կալանաւորվեց շուտով։

Թիֆլիսի ռուսաց Սուրբ Երրորդութեան եկեղեցու (Տրօիցկի փողոցի վրա) երէցփոխ Գէօրգի Ստեփանովիչ Իվանովը յայտնել է 3-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ ապրիլի 19-ի գիշերը, անյայտ չարագործներ բանալով եկեղեցու լուսամուտները, ներս են մտել, կոտրել մոմային արկղի առաջին և ներքին կողպէքները և տարել 15 րուբլի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

IV

Թէհրան, ապրիլի 12-ին

Երբ Թուրք-հայկական ընդհարումները դեռ նոր էին սկսվել Կովկասում, համիսլամականութեան գաղափարի տխրահռչակ հերոսները աշխատում էին արհեստական կերպով այդպիսի ընդհարումներ առաջ բերել և Պարսկաստանի հայաբնակ քաղաքներում և գաւառներում։ Սակայն այդ աննախանձելի հերոսների կեղտոտ աշխատանքը բոլորովին ապարդիւն անցաւ, որովհետև պարսից կառավարութիւնը մի այնպիսի համակրելի ուղղութիւն բռնեց իր հաւատարիմ և խաղաղասէր հայ հպատակների վերաբերմամբ, որը օրինակ տեղ կարող էր ծառայել ռուսաց բիւրօկրատական կառավարութեան համար։

Կառավարութեան ձեռք առած եռանդուն ու ազդու միջոցները այնպէս ոչնչացրին և ի դերև հանեցին համիսլամիստ մոլեռանդ ու կեղտոտ պրոպագանդիստների զզուելի գործունէութիւնը, որը մօտ մի տարուց ի վեր բուն էր դրել Պարսկաստանի հայաշատ կենտրոններում։

Պարսկական սգի մեծ տօները՝ Մուհարրէմը, երբ իբր թէ սպասվում էին կոտորածներ, աւելի քան խաղաղ և ուրախ անցաւ։ Հէնց այդ օրերը ստացաւ Իրանի Վեհապետը Վեհափառ Հայրիկի սիրալիր և բովանդակալից նամակը, որի մէջ մանրամասն և անաչառ կերպով պարզաբանված էին Կովկասի Թուրք-հայկական ընդհարումների իսկական շարժառիթները և հետևանքները, որ ինչպէս պատմում են ականատեսները, Շահնշահի վրա հիանալի և համակրելի տպաւորութիւն է թողել։

Այդ նամակը պարսից արտաքին գործերի մինիստրի միջոցով Շահին պատիւ է ունեցել ներկայացնելու Թումանեան եղբայրների առևտրական տան Թէհրանի բաժանմունքի ներկայացուցիչ պ. Ալէքսան-խան Թումեանը։ Վեհապետ Մուզաֆֆէր-Էդդինը, ինչպէս պատմում են ներկայ եղողները, խորին ուշադրութեամբ լսել է նամակի ընթերցումը մինչև ամենավերջին խօսքը և պատուիրել է մինիստրին իր կողմից մի սիրալիր և գեղեցիկ պատասխան գրելու Վեհափառ Հայրիկին, որ մօտ օրերս կուղարկվի։

Թուրք-հայկական ընդհարումների վերաբերմամբ ընդհանրապէս և պարսկահայերի վերաբերմամբ մասնաւորապէս համակրելի ուղղութիւն է բռնել մինչև այսօր նաև իսկական կամ բուն Պարսկաստանի մամուլը։ Նա թէև առանց այն էլ սովորաբար չէ զբաղվում երկրի արտաքին և ներքին քաղաքականութեան վերաբերող հարցերով, բայց երկու ազգերի ընդհարումների ժամանակ մեծ մասամբ գրեթէ լռութիւն պահպանեց, արտայայտելով միանգամայն պարսից կառավարութեան բարեհաճ և բարեկամական տրամադրութիւնը պարսկահպատակ հայերի վերաբերմամբ։

Թուրք-հայկական ընդհարումներով բուն Պարսկաստանի թերթերից ամենից շատ զբաղվեց տեղիս, նորերս դադարած «Թարբիաթ» լրագիրը, որ իր վերջին համարներից մէկում հետևեալ անաչառ յօդուածն էր զետեղել այդ խնդրի մասին։

«Մօտ մի տարի է անցել այն օրից, երբ Կովկասում հարևան երկու ազգերի մէջ սկսվեցին ողբալի ընդհարումներ, որոնց զոհ գնացին երկու կողմերից էլ բաւական մարդիկ և նիւթական անչափ հարստութիւններ։ Այդ ընդհարումների առթիւ մենք բազմիցս պարսկահայ մի քանի հայերից մասնաւոր նամակներ ենք ստացել, որոնք վերոյիշեալ ազգերի կռիւների մասին սրտանց ցաւակցութիւն են արտայայտել և միևնոյն ժամանակ զանազան ապացոյցներով իրանց հլու և հաւատարիմ հպատակութիւնը պարսից սիրելի և հզօր Շահին։

Խմբագրութիւնս այդ նամակներին տեղ չըտուեց իր էջերում, այլ Բագուի և ուրիշ տեղերի սոսկալի դէպքերը չեղած համարելով, լուռ ու մունջ անցաւ։ Իսկ այժմ, երբ հանգամանքները մեզ ներում են, մենք առիթից օգուտ ենք քաղում մեր բաժանորդների արթնութեան համար հետևեալ կարծիքը յայտնելու։

Ամենից առաջ Ղուրանում գրված է, որ ներելի չէ մէկի գործած յանցանքի պատասխանատուութիւնը մէկ ուրիշի վրա ձգել, այլ ամեն մարդ իր մեղքը ինքը պէտք է քաշէ (ամեն մարդ իր համար է գործում)։ Բացի դրանից ամեն մարդ պէտք է իր ցանածը ինքը հնձէ և ուրիշի մեղքերի հետ գործ չունի։ Երկրորդ՝ ամենաընդունված իսլամական կանոնով արդար մարդուց վրէժխնդիր լինելը հարամ է։ Ամեն ազգի մէջ կան թէ լաւ և թէ վատ մարդիկ։ Սադափներն էլ բոլորը միևնոյն յարգի չեն լինում, դրանցից ոմանք թանգագին մարգարիտներ, իսկ ոմանք էլ աժանագին շարաններ՝ սուտակներ։ Օրէնքը թոյլ չէ տալիս այդ երկու տեսակները միմեանց հետ խառնել։ Երրորդ՝ մի րոպէ ենթադրենք, թէ Կովկասի ընդհարումների պարագլուխները հայերն են եղել, բայց դա մեզ դեռ ևս իրաւունք չէ տալիս դրա համար Պարսկաստանի հայերից վրէժ առնելու, երբ այդ հայերից մինչև այսօր ոչ մի յանցանք չենք տեսել։ Արդէն բոլորին էլ յայտնի է, որ մեր թագաւորին պաշտելու մէջ Պարսկաստանի հայերը մինչև այսօր [illegible] մնան։

Ասածներիցս այն է հետևում, թէ այսօր պարսկահայերին վնասելը թէ կրօնական և թէ քաղաքական օրէնքի տեսակէտից հարամ է։ Փառք Աստուծոյ, որ մինչև այժմ բոլոր ազգերը մեր սիրելի թագաւորի պաշտպանութեան շուքի տակ հանգիստ են եղել։ Աստուած այդ սիրոյ շուքը երկարատև դարձնի»։

Սակայն բոլորովին ուրիշ ուղղութիւն բռնեցին Թուրք-հայկական ընդհարումների և պարսկահպատակ հայերի վերաբերմամբ իսկական Պարսկաստանից դուրս հրատարակվող պարսկերէն մի քանի թերթեր, որոնցից նշանաւորներն են Կալկաթայում հրատարակվող «Հաբլ-ուլ-Մաթին»-ը և Ալէքսանդրիայի «Չեհրենումա»-ն։

Այդ երկու թերթերն են պանիսլամիզմի նշանաւոր պրոպագանդիստները պարսկախօս մահմեդականների մէջ։ Թերթեր, որոնք ոտի տակ տալով գրական էթիկայի ամենատարրական սկզբունքը մասնաւորապէս և մարդկային բարոյականութիւնը ընդհանրապէս կատաղի արշաւանք և հալածանք են սկսել հայերի դէմ և միջոցների մէջ խտրութիւն չեն դնում Պարսկաստանի հայերի մէջ կոտորած առաջ բերելու։ Դրանցից մանաւանդ աչքի է ընկնում «Հաբլ-ուլ-Մաթին»-ը, որ իր գլխաւոր նպատակն է դարձրել պարսկահայերին լրբաբար զրպարտելը և նրանց կառավարութեան աչքում կասկածելի ու անհաւատարիմ դարձնելը։

Այդ թերթը իր վերջին համարները լցրել է հայերի մասին ստայօդ և թունաւոր յօդուածներով, որոնք բանական ընթերցողներին միմիայն զզուանք և զարշանք կարող են ազդել։

«Հաբլ-ուլ-Մաթին»-ի անբարոյականութիւնը այն աստիճանին է հասնում, որ ուզում է պարսից կառավարութեան համոզել իբր թէ հայերը Պարսկաստանումն էլ սեպարատիստական ձգտումներ ունեն և ցանկանում են Ատրպատականը միացնել իրանց ապագայ անկախ պետութեան հետ։ Եւ որպէս զի իր գարշահոտ զրպարտութիւնը պարսիկներին մարսել տայ, իր թերթի գրեթէ բոլոր յօդուածներում միշտ շեշտում է, որ ինքը նախանձախնդիր է Պարսկաստանի ամեն տեսակ շահերին և հայրենասիրական զգացմունքով է տոգորված դէպի այդ երկիրը։

Սակայն, հաւատացէք ընթերցող, պարսիկների թշնամի Թիւրքերի կողմից պարզապէս կաշառված մի պարսիկի այլանդակ հայրենասիրութիւնը։ «Հաբլ-ուլ-Մաթին»-ը, որ ստոյգ աղբիւրների համաձայն Թիւրքաց կառավարութիւնից իբրև համիսլամիզմի պրօպագանդիստ ամսական 40 օսմանեան լիրա (400 րուբլի) կաշառք-ռոճիկ է ստանում, վերջերս բոլորովին մատնեց իր կեղծ և վտանգաւոր հայրենասիրութիւնը։

Մի այնպիսի խոշոր և կարևոր դէպք, որպիսին Թիւրքերի ներկայումս պարսկական Լայիջան կոչված գաւառին ապօրինի կերպով տիրանալն է, որ կարող է ապագայում Պարսկաստանին քաղաքական մեծ վնասներ պատճառել, ամենահասարակ ուշադրութեան անգամ չէ արժանանում «Հաբլ-ուլ-Մաթին»-ի կողմից, երբ նա ընդհակառակը այդ խնդրի շօշափման և Թիւրքերին պատասխանատուելու ժամանակ իր հայրենասիրական զգացմունքի ամբողջ թափով պէտք է գրական ասպարէզ դուրս գար, եթէ նա իսկապէս նախանձախնդիր է Պարսկաստանի շահերին, իբրև հայրենասէր, ինչպէս ինքն է միշտ աշխատել թող փչելով հաստատել։ Բայց չէ՞ որ նրա գրիչը կեղտոտվել է օսմանեան ոսկիներով և դրա համար էլ նա ստիպված է Զաքարէի պապանձման օրինակին հետևել։ Հետևապէս պանիսլամիստ թերթը իր լռութեամբ արդարացնում է Թիւրքերի ապօրինի վարմունքը պարսից հողի յափշտակութեան գործում։

Հասարակ դէպքում, եթէ նեղ տեղն ընկած չը լինէր, «Հաբլ-ուլ-Մաթին»-ը այնպիսի եռանդով և բողոքով կը պաշտպանէր Պարսկաստանի քաղաքական շահերը, ինչպէս մի տարի սրանից առաջ պաշտպանեց այդ շահերը հակառակ անգլիականի, մի ուրիշ, նոյնպէս նշանաւոր խնդրում։

Այդ խնդիրը վերաբերում էր Պարսկաստանի հարաւ-արևելեան սահմանային գաւառ Սէիստանին, երբ պէտք է այդ գաւառում որոշվէր Պարսկաստանի և Աւղանիստանի սահմանը։ Առաջներում այդ գաւառում երկու կողմերի սահմանը կազմում էր Սէիստանի միջով հոսող մի մեծ գետ, որ մի քանի տարիների ընթացքում փոխելով իր հոսանքը, թիւրիմացութիւններ էր առաջ բերել երկու պետութիւնների սահմանային խնդրում։ Այդ խնդիրը վերջացնելը երկուսի համաձայնութեամբ էլ յանձնվեց Անգլիային։ Վերջինս երկու երկիրների սահմանի նորից որոշումը կատարեց զուտ անգլիացիներից բաղկացած մի կոմիսիայի միջոցով և Սէիստանից մի աւելորդ կտոր միացրեց Աւղանիստանին, ի վնաս Պարսկաստանի։

Այդ ժամանակ «Հաբլ-ուլ-Մաթին»-ի կատաղութիւնը չափ ու սահման չէր ճանաչում։ Նա հրատարակվում էր անգլիական հողի վրա, Հնդկաստանի մայրաքաղաքում և բողոքի ուժգին շանթեր էր արձակում Անգլիայի հասցէին, որ նա Սէիստանի սահմանը արդարացի կերպով չէ որոշել։ Իսկ այժմ մի աւելի կարևոր՝ Լայիջանի խնդրում խորին լռութիւն է պահպանում, որովհետև կուրացած է...

Բայց չէ՞ որ ամեն բան իր չափ ու սահմանն ունի, նոյն իսկ Լիխտէնշտայնի իշխանութիւնը, ասում է գերմանական առածը։

Լ. Բաբայեան

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ԿԱՏԱՍՏՐՈՖԸ

Մեր երկրագունդը, կարծես իր վրա գործվող անլուր ոճիրները այլ ևս կրելու անընդունակ, կորցրել է իր սառնասրտութիւնը և անձնատուր լինում արիւնի ու աւերի կատաղութեան։

Դեռ ևս Կուրիէրի աղէտը չամոքված, դեռ ևս Իտալիայի գլխին պայթած Վեզուվի պատուհասը չը մեղմացած, յանկարծ սուգի ու արցունքի մէջ է խորասուզվում մի ամբողջ շէն, գեղեցիկ, հոյակապ քաղաք, Սան-Ֆրանցիսկօն, Հիւսիսային-Ամերիկայում։

Եւ Սան-Ֆրանցիսկօյի կատաստրոֆը, իր [illegible] ահռելի ու ողբերգական, աներևակայելի զրուագներով՝ մոռացնել է տա[illegible]թիւնները։

Տարիների յամառ աշխատանքով՝ փարթամ շլացուցիչ, կեանքով ու եռանդով թրթռուն մի քաղաք, երեք րոպէի մէջ հիմնայատակ կործանվում է։

Երեք րոպէի դիւային ցնցում բաւական է լինում ամեն ինչ տակն ու վրա անելու։

Մարդիկ մեռնում են ոչ միայն փլատակների տակ ու հրդեհի բոցերի մէջ, այլ իրանց զգացած սարսափից։

Սան-Ֆրանցիսկօյի բնակիչների մեծամասնութիւնը, մի դժբաղդ գիշեր, ընդոստ զարթնելով՝ իրանք իրանց գտան իրանց սենեակների տախտակամածի վրա։ Բնազդաբար դուրս թռչելով շէնքերից, որոնք պարում էին ու սպառնում փլչել, սկսեցին գժի նման վազվզել այս ու այն կողմը։ Բայց տներից դուրս հողը նոյնպէս փախչում էր իրանց ոտների տակից, մի տեղ բարձրանում էր, միւս տեղ իջնում։ Մայթերը, սալայատակները փուլ էին գալիս. փողոցները պատռվում երկար ակօսների ձևով։

Շարժը տևեց երեք րոպէ։ Բայց այդ երեք րոպէն զարհուրանքի մի անհունութիւն եղաւ։ Տասնեակ հոգիներ զարզանդից անշունչ ընկան թաւալգլոր։ Լսվեց հողի տակից մի խուլ, աներկրային որոտում, ինչպէս ամպրոպը երկնքի անսահմանութեան մէջ, և այդ որոտին յաջորդեց մի քամիելի, ահեղ ճարճատիւն։ Շէնքերի փլուածներն էին, որ իրար ետևից փուլ էին գալիս։ Դժոխային ժխորը դադարեց և սարսափից կիսամեռ քաղաքի վրա տարածվեց մի աւելի քան գերեզմանային լռութիւն։ Մարդիկ լեղապատառ փախչում էին, առանց գիտենալու թէ ուր, և իւրաքանչիւր ցնցումի կանգ էին առնում, դիտում անձկութեամբ իրանց ոտքերի տակ, արդեօք հողը չը ճեղքվե՞ց և կուլ չը պիտի տայ իրանց։ Յետոյ, երբեմն, սարսափից ուշագնաց՝ երեսի վրա փռվում էին գետին։

Անցան երեք աննկարագրելի րոպէները, առաջին ցնցման րոպէները, որոնց ընթացքում ազգաբնակութիւնը իր գիտակցութիւնը կորցրած՝ չէր իմանում թէ ինչ է պատահում իրանց հետ, իրանց շուրջը։ Երբ երկիրը քիչ պնդացաւ իրանց քայլերի տակ, այն ժամանակ ուշաբերած ժողովուրդը անձնատուր եղաւ մի անօրինակ տեսարանի։ Հերարձակ, մեռելատիպ կանանց ճիչերը խառնվեցին տղամարդկանց յուսահատութեան աղաղակներին և բոլորը կարծես մի հսկայական զսպանակից մղված՝ գրոհ տուեցին դէպի պարկերը, այգիները, խոյս տալու համար պատերի տակից, որոնք սպառնում էին ցած գալ։ Մի քանի վայրկեանում պարկերը լցվեցին գիշերազգեստ մարդկանցով, որոնք հեծեծում և ճչում էին իւրաքանչիւր երկրաշարժից։

Ամբոխի սարսափը իր գագաթնակէտին հասաւ, երբ հինգ բոպէ յետոյ գազի և էլէկտրականութեան հոսանքը ցնցումներից կտրվեց և փողոցի բոլոր լապտերներն ու լոյսի կտուցները հանգան: Ազգաբնակութիւնը՝ հոգեկան անբացատրելի տրամադրութեամբ սպասեց խաւարի, սարսափի ու տանջանքի մէջ լոյսի ծագելուն: Արշալոյսը վերջապէս դողդոջեց երկընքում, բայց նրա ճառագայթները դեռ ևս երկիրը չը լուսաւորած՝ մի վիթխարի ճաճանչ արիւնոտեց արևելքը: Քաղաքն է, որ հրդեհվում էր պայթած խողովակներից դուրս ժայթքող գազի բռնկումով. վառվում էր քաղաքի առևտրական մասը

Մարդկանց միջից ամենաքաջերը, նրանք, որոնք ընտանիք չունէին՝ հսկելու, իրանց գիշերվայ զգեստով շտապեցին օգնութեան: Հասաւ հրշէջների խումբը: Բայց, աւա՜ղ, ապարդիւն, որովհետև քաղաքում ջո՜ւր չը կար: Պայթել էին և ջրի խողովակները:

Քաղաքի այն մասում, ուր ապրում էին օտարերկրացիները, ինչպէս իտալացիներն ու չինացիները, տեսարանը մանաւորապէս սըրտաճմլիկ ու հետաքրքիր էր: Չինացիները մանաւանդ ցոյց էին տալիս մի անհաւատալի սարսափ ու շփոթ: Իրանց գետնափորներից մրջիւնների նման դուրս սողալով, արշաւեցին մօտակայ սկուէրը զարհուրելի աղմուկ բարձրացնելով: Սկուէրում, պարտէզիկում, նրանք ընդհարվեցին այնտեղ ապաստանող իտալացիների հետ: Պանիկան փոխվեց այն ժամանակ մոլեգնութեան: 10,000 չինացիներ կռուի բռնվեցին մի քանի հազար սպանիացիների, և մեկսիկացիների հետ, որոնք նոյնպէս ուզում էին սկուէրում ապաստանել. պայքարը տևեց մինչև առաւօտ, երբ զօրքը՝ սուինեբով եկաւ կարգը վերահաստատելու:

Ամեն մարդ ու ամեն հաստատութիւն աշխատում էր իր գանձը փրկել: Կառքերը՝ ահագին գումարներով բեռնաւորված՝ դժգոյն, դողդոջուն կառավարների ու պաշտօնեաների հսկողութեան տակ, թռչում էին քաղաքից դուրս, մի ապահով տեղ զետեղելու հարստութիւնը: Դիակներ ու վիրաւորներ փոխադրող մարդիկ, կանգ էին առնում և հայհոյութիւններով ու ճիչերով ամբակոծում այդ կառքերը, որոնք մարդկային զոհերը լքում էին արժէքաւոր իրեր փախցնելու համար:

Առաւօտեան ժամը 8-ին նորից դղրդաց երկիրը, ու քիչ խաղաղված ժողովուրդը նորից ալեկոծվեց, նորից ընկղմվեց մայլ յուսահատութեան մէջ: Այն ժամանակ մարդիկ, որոնք մնացել էին քաղաքում, պաշարեցին բանկերը, վերցնելու իրանց փողերը և իրանց ոսկի փոշին թափ տալով հեռանալու անիծված, ապերախտ քաղաքից:

Մինչդեռ շատերը աշխատում էին իրանց հարստութիւնն ազատել, քաղաքի այլ և այլ մասերում տեղի էին ունենում սարսափից ու յուզումից շնչահեղձ անող տեսարաններ: Մի մարդ բանտարկված փլատակների մէջ, որոնց սկսել էր լափել հրդեհը, պաղատում էր ոստիկանից վերջ դնել իր սոսկալի տանջանքներին: Ոստիկանը նրան ազատելու հնարաւորութիւնից միանգամայն զրկված՝ քաշեց ատրճանակը և արձակեց դժբաղդի վրայ: Բայց գնդակը չը կպաւ: Դրա վրա մի ուրիշ մարդ, զինված դաշոյնով, խոյացաւ դէպի այնտեղ, ուր խորովվում էր թշուառը, և զիջանելով նրա պաղատանքին՝ կարճել նրա նահատակութիւնը—սպանեց:

Մի յիմարանոց, Սանտա Կլարա թաղի մօտ փլչեց և իր տակ թաղեց 250 հոգու. բազմաթիւ յիմարներ, որոնք վտանգից ազատ էին մնացել, սկսեցին կատաղած վազել ամեն կողմ, սարսափի մատնելով կանանց, երեխաներին ու տղամարդկանց:

Նկարագրել կատարված սարսափները՝ անկարելի է:

Ամբողջ Սան-Ֆրանցիսկոն. Կալիֆորնիայի մայրաքաղաքը, համարեա կործանված է: Շատ [illegible] պէս 30,000 տուն այրված ու աւերված են: Իսկ 3,000 հոգի՝ փլատակների տակ թաղված, վառված և յանկարծամահ եղած: Դիազննարաններում տեղ չը լինելու պատճառով, իշխանութիւնները խնդրել են ծովային մինիստրից Խաղաղ Ովկիանոսի նաւատորմը ուղարկել, դիակները ծովը թափելու համար, որովհետև վախենում են ժանտախտից:

Հրդեհը կանգնեցնելու համար վառօդով, ուժանակով օդն էին թռցնում շրջակայ շէնքերը: Բայց սպառվեցին և՛ վառօդը և՛ ուժանակը, դինամիտը:

Թշուառացած, դժբաղդ ազգաբնակութիւնը ոչ միայն իր գլուխը դնելու տեղ չունի, այլ և ուտելու հաց չունի, խմելու՝ ջուր: Մի բաժակ ջուրը ծախվում է... 50 կոպէկ: Կառքերի մի ժամվայ վարձը... 100 րուբլի...

Ճիշտ է, մենք, Ռուսաստանում ապրողներս ոչինչ չունենք նախանձելի, քանի որ մենք էլ ունենք մեր երկրաշարժն ու հրդեհը—Վիտտէ-Դուրնովեան ռէժիմի քաղցրութիւնները:

Եւ սակայն կարծում եմ, աւելի լաւ է ապրել Ռուսաստանում, քան Սան-Ֆրանցիսկոյում, որովհետև, մենք՝ թէպէտև հրդեհվում ենք, սպանվում ենք, բայց գոնէ փող չենք վճարում ջրին և կառքերը դեռ ևս երբեք չեն պահանջել 100 րուբլի, մեզ մի ժամ զբօսնելու համար:

Այդ էլ թող մեր մխիթարանքը լինի...

Տ. Զ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

—Լոնդոն, 12 ապրիլի: Երեկոյեան պատգամաւորների պալատում, բանւորական կուսակցութեան պարագլուխ Գարդի առաջարկութիւն զարգացրեց կանանց ընտրողական իրաւունք տալու մասին: Վիճաբանութիւնների ժամանակ, գալլերէյաներում, վանդակներից դուրս, հաւաքված 20 կին ագիտատորներ, նկատելով, որ առաջարկութեան հակառակորդները գիտութեամբ աշխատում են ձգձգել վիճաբանութիւնները մինչև ժամի 11-ը, երբ, կանոնադրութեան համաձայն, իւրաքանչիւր մասնաւոր առաջարկութիւն, որ մինչև այն ժամանակ չէ ենթարկվել քուէարկութեան, այլևս պէտք է մերժվի, աղմուկ բարձրացրին, սկսեցին բղաւել. «Քուէարկեցէք! Արդարացատ եղէք դէպի կանայք»! և վանդակների միջից դուրս հանեցին մի դրօշակ մակագրված. «Ձայն տուեցէք կանանց օգտին!»: Սպիկերը հրամայեց թողնել գալլերէյան, և ոստիկանութիւնը զգուշութեամբ հեռացրեց կանանց, գրելով նրանց ազգանունները և հասցէները: Կանանց պաշտպանները շատ վշտացել են և կարծում են, որ այդ միջնադէպը փչացրեց ամբողջ գործը մի քանի տարիներով:

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թիւրք-պարսկական վէճը: Կ. Պօլսից հեռագրում են ապրիլի 12-ին, թէ պարսից դեսպանը Բ. Դռան նոր և խիստ ազդարարութիւն ուղղեց, որով պահանջում է սահմանագլխի միջադէպին համար շուտով և կատարեալ գոհացումն տալ: Բ. Դուռը ստացել է հեռագիրներ, որոնք տեղեկացնում են, թէ յուզմունք է սկսել երևան գալ Պարսկական ծոցի շատ ցեղերի մէջ, թիւրք զօրքերի պարսկական հողի վրա երկար ժամանակ մնալու պատճառով:

—Կ. Պօլսից հեռագրում են ապրիլի 11-ին. «Երէկ ռուսական և բրիտանական դեսպանները առաջարկութիւն արեցին Բ. Դռան, ուստի Եըլդըզ-Քիոսկից հրաման տրվեց վերջնին զեկուցումն ներկայացնել այդ մասին: Մեծ վէզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ ունեցած խորհրդակցութեան ժամանակ պարսից դեսպանը ցոյց տուեց այն հետևանքները, որ առաջ կը գան, եթէ Բ. Դուռը չը զիջէ: Դեսպանը երկու առաջարկութիւն արեց, բայց միայն այն պայմանով, որ թիւրքաց զօրքերը կանխապէս մաքրեն Վանի անցքը: Առաջին առաջարկութիւնը կայանում է նրանում, որ ծագած տարաձայնութիւնները, որոնց վերաբերմամբ թիւրքաց և պարսից պատուիրակները անկարող են համաձայնութեան գալ, յանձնվին մեծ պետութիւնների քննութեան՝ իբրև միջնորդ դատաւորների: Երկրորդ առաջարկութիւնն այն է, որ սահմանային բոլոր վէճերը պէտք է յանձնվին այդ միջնորդ դատարանի քննութեան:

ԻՏԱԼԻԱ

Պօստային կօնգրէսի բացումը:—Համաշխարհային թղթատարութեան 6-րդ կօնգրէսի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Հռոմի մէջ ապրիլի 7-ին Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի և թագուհու ներկայութեամբ:

ՖՐԱՆՍԻԱ

Հանքագործների գործադուլը.—Պա-դը Կալէի շրջանի հանքագործ բանւորների գործադուլը իր վախճանին մօտ լինելուց հեռու, սկսում է հետզհետէ աւելի սպառնալից կերպարանք ստանալ: Համարեա բոլոր տեղերում, զայրացած բանւորները դիմում են բողոքի բուռն ցոյցերի. աւերմունքներ պատճառում են գործադուլը դաւաճանող բանւորների բնակարաններին, ծեծում են նրանց, ընդհարումներ ունենում զօրքի և ոստիկանութեան հետ: Բարեբաղդաբար, բանւորական ներվայնութեան այդ արտայայտութիւնները, որոնք արդիւնք են հանքատէրերի յամառ դիմադրութեան և մի քանի այլ ցնցող հանգամանքների, առանձնապէս ցաւալի միջադէպերի տեղի չեն տալիս: Բանւորները, ինչպէս և ամբողջ հասարակութիւնը, վրդովված են այն բանից, որ աղէտքից յետոյ, հորերի մէջ թաղված բանւորներին ազատելու գործը զոհեցին կապիտալիստական շահերին: Հորերը փակեցին, որպէս զի հրդեհը հանգչի: Բայց փրկելով հանքատէրերի օգուտները, զոհեցին բանւորական բազմաթիւ կեանքերը: Եթէ ազատման գործը անմիջապէս սկսված լինէր, անկասկած տասնեակ հանքատէրերի կեանքը փրկած կը լինէին: Բայց հանքատէրերի շահերի պաշտպանութեամբ կուրացած ինժեներները առարկեցին, որ ոչ մի բանւոր չէր կարող ողջ մնացած լինել, եթէ պայթիւնից սպանված չէր, անպատճառ թունաւորված էր գազերից: Բայց իրականութիւնը բոլորովին հակառակը ցոյց տուեց: Շաբաթներ յետոյ հանքային փլատակներից դուրս եկան մարդիկ, որոնք մի մի կենդանի բողոք էին ինժեներների ոճրագործ անփութութեան: Այդ դեռ բաւական չէր, երկու շաբաթ յետոյ, նորից գերեզմանից դուրս եկաւ մի հանքագործ: Այս անգամ վրդովմունքը մեծ էր և՛ բանւորների և՛ հասարակութեան մէջ: Բողոքը այնքան բուռն արտայայտութիւն ստացաւ, որ կառավարութիւնը ստիպվեց պատասխանատուութեան ենթարկել պետական և հանքատէրերի ծառայութեան մէջ գտնվող ինժեներներին: Հասարակական կարծիքի ճնշման տակ, վերսկսեցին հանքերի աւերակների խուզարկումը և այդ աշխատանքը դարձաւ մի սարսափելի փաստ երևան հանող կապիտալիստ հանքատէրերի և նրանց ինժեներների դէմ: Դիակները, որոնք դուրս էին հանում հանքային հորերից, դեռ տաք էին, այսինքն, եթէ մի օր առաջ սկսված կը փրկվէին: Այս բոլոր դէպքերը զայրացրին, [illegible] բանւորներին: Իրանց ապրուստի աղբիւրը, իրանց ամուսինները կորցրած բանւորուհիներ բուռն, աղմկալից ցոյցեր կազմեցին հանքատէրերի և ոստիկանութեան դէմ. մինչև այն ժամանակ խաղաղ բանւորները, այդքան դաւաճանութիւններից յետոյ, տեսնելով հանքատէրերի յամառութիւնը՝ գոհացում չը տալ իրանց արդար պահանջներին, անձնատուր եղան բռնի ցոյցերի. Ջղագրգռված սկսեցին հալածել այն բանւորներին, որոնք մատնելով իրանց ընդհանուր դատը, իջնում էին հորերը աշխատելու, սկսեցին քարկոծել ոստիկանութիւնը, որ պաշտպանում էր, աշխատանքի ազատութեան, և սեփականութեան անձեռնմխելիութեան պատրուակի տակ, կապիտալիստական շահերը: Ահա ինչու, հեռագիրները մեզ հաղորդում էին, մէկը միւսի ետևից, բանւորների և զօրքերի ընդհարումների մասին հանքային շրջաններում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի: Կառավարչական սենատի քրէական վճռաբեկ ատեանի վարչութիւնը հաստատեց Թիֆլիսի դատաստանական պալատի դատավճիռը, որի համաձայն իշխ. Թումանեանը խարդախութեան համար դատապարտվում է 8 ամսով բանտարկութեան բանւորների ուղղիչ բաժնում, իսկ իշխ. Թարխան-Մօուրավովը և անտառապետ Կամարականի այրիացած կինը մեղսակցութեան համար—15 ամիս և 10 օրով բանտարկութեան բերդում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի: Գեներալի շտաբի անդամ գեներալ-լէյտենանտ Իվերոր նշանակված է գլխաւոր շտաբի կառավարիչ: —Օրէնքների ժողովածուում հրատարակված է այն հաստատված կանոնները, որ վերաբերում են Պետական Խորհրդի և Դումայի շինութիւններում լինելիք հարկաւոր կարգը պահպանելուն և Պետական Խորհրդի շինութիւնը կողմնակի մարդկանց ներս թողնելուն:

ՓԱՐԻԶ, 18 ապրիլի: Աշխատանքի բորսայի մուտքի մօտ կուտակված ամբոխից ձերբակալված են ընդամենը 800 հոգի, որոնք այժմ գտնվում են զօրանոցներում: Առհասարակ բռնելու են բռնութիւններ գործ դնողներին և զէնքեր ունեցողներին: Ձերբակալվածների մէջ կան նաև մի քանի ռուսներ: Երեկոյեան Շեմանակի գետափի մօտ դրագոնները յարձակվել են ամբոխի վրա, որ շրջապատել էր ոստիկանական պահակախմբին: Կան շատ վիրաւորներ: Պարիզը երեկոյեան ընդունեց տըխուր կերպարանք, փողոցները բոլորովին դատարկվեցին և օմնիբուսները դադարեցին երթևեկութիւնը: Գաւառներում ցուցարարները անաջողութեան են հանդիպել. ոստիկանութիւնը նրանց արագութեամբ ցրել է:

ԲԵՐԼԻՆ, 18 ապրիլի: Ռուսներին արտաքսելու առիթով Րէյխստագում սօցիալ-դեմօկրատները կոմս Բիւլովին հարցապնդում արին: Բեռլինի վաճառականական դաշնակցութիւնը ներքին գործերի մինիստրին մի գրութիւն է ներկայացրել, որի մէջ մատնացոյց է անում այն թշնամական վերաբերմունքի վրա, որ տիրում է այժմ Ռուսաստանում դէպի Գերմանիան ռուսներին արտաքսելու պատճառով:

ՍՕՍՆՕՎԻՑԻ, 18 ապրիլի: Սօսնովի—Դոմբրովսկի բայոնի բոլոր գործարանները, ֆաբրիկաները և ածխահանքերը փակ են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի: Լրագիրները հաղորդում են, որ Վիբօրգի բանտից ազատ են թողնված ապրիլի 18-ին քաղաքական 30 բանտարկեալներ, մօտերս արձակելու են կրկին 100 հոգու: Լրագրների տեղեկութիւններին նայած—մայիսի 1-ին Կալիշում, Վիլնայում, Մինսկում, Բերդիչևում, Ռիգայում և Պլօցկում գործադուլ է արել բանւորների մի մասը. այդ օրը հանգիստ է անցել:

ՎԻԵՆՆԱ, 18 ապրիլի: Պրատէրի մօտ խռնված ահագին ամբոխը ցոյց սարքեց, որ անցաւ բոլորովին հանգիստ կերպով:

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 18 ապրիլի: Մայիսի 1-ը շատ խաղաղ անցաւ. ուսանողներից և բանւորներից կազմված մի խումբ դրօշակներով, երաժշտութեամբ և ահագին ամբոխի ուղեկցութեամբ դիմեց դէպի քաղաքային ծառաստանը. բոլոր ժամանակ փողոցներում անսովոր կենդանութիւն էր տիրում:

ԲԵՐԼԻՆ, 18 ապրիլի: Ի պատիւ մայիսի 1-ին շատ քաղաքներում, ինչպէս և այստեղ աշխատանքները դադարեցին:

ԲԱԳՈՒ, 18 ապրիլի: Պետական պալատի նախագահը զեկուցեց գեներալ-նահանգապետին, որ քաղաքը ծախսել է պետական մօտ 234,500 րուբլի հարկերը, որ զանազան ժամանակներում ժողովել է բնակիչներից և չէ մուծել պետական գանձարանը: Այդ առիթով գեներալ-նահանգապետը քաղաքային վարչութիւնից բացատրութիւն է պահանջել:

20 ապրիլի

ՎԱՐՇԱՎԱ, 18 ապրիլի: Քաղաքում այսօր լիակատար գործադուլ է: Փակ են բոլոր արհեստանոցները և գործարանները, խանութները և ռեստօրանները, էլէքտրաքարշը չէ գործում, կառապաններ չը կան, լրագիրները լոյս չը տեսան:

ԲՐԻՍՏ, 13 ապրիլի: (Հավաս): Նաւաշինարանների բանւորները միտինգից յետոյ մտադրեցին թափօր կազմել: Ոստիկանութիւնը ոստիկանապետի հրամանով խլեց ցուցարարներից դրօշակները, որի ժամանակ իրարանցում պատահեց, մի քանիները վէրքեր ստացան. եղան ձերբակալութիւններ:

ՓԱՐԻԶ, 18 ապրիլի: Մի օրում 600 ձերբակալութիւններ է եղել, բռնվածներից 150 հոգին մեղադրվում են խռովութեան ժամանակ ոստիկանութեան խօսքերով և գործողութիւնով վիրաւորելու մէջ, ուստի և նրանք մնալու են հսկողութեան ներքոյ: Նրանցից 70 օտար երկրացիներ են, գլխաւորապէս ռուսներ: բոլոր այդպիսիներին արտաքսելու են Ֆրանսիայից: Ընդհարման ժամանակ սպանված են 13 ոստիկաններ, իսկ ամբոխից հիւանդանոց տարվել են մօտ 60 հոգի:

ԼԻՕՆ, 18 ապրիլի: Ցուցարարները մի քանի տեղեր կանգնեցնում էին էլէքտրաքարշը, կոտրտում և ջարդում էին նրա ապակիները և լապտերները: Հասարակութիւնից մի քանի հոգի վէրքեր են ստացել: Հեծելախումբը ցրեց ամբոխը, վիրաւորելով մի քանի բանւորների: Տեղի ունեցան ձերբակալութիւններ. խանութները փակ են: հեռագիրը յայտնում է, որ Սուֆֆօլկի երկրորդ գունդը հրաման է ստացել դիմել Մատըբիլից Ակէն:

ՏԱՒԻՍԻՍՈՒ, 18 ապրիլի: Պեկինից հաղորդում են, որ Չինաստանը հակառակում է միջազգային նաւահանգիստները բանալուն այն պատճառով, որ երբերի դրութիւնը դեռ ևս լիովին պարզված չէ:

ԼՈՆԴՈՆ, 19 ապրիլի: Պետերբուրգից հեռագրում են, որ յուսալի աղբիւրից բխող լուրի համաձայն կոմս Վիտտէի յաջորդ լինելու է Ի. Լ. Գորէմիկինը:

ՓԱՐԻԶ, 19 ապրիլի: Կոմս Վիտտէի հրաժարականի առիթով «Թան»-ը, «Դեբա»-ն մի համակրելի յօդուած են նուիրել կոմս Վիտտէի առիթով: «Դեբան» ցոյց է տալիս, որ կոմսը անօրինակ հետևողականութեամբ ի կատար ածեց իր վրա դրած պարտականութիւնը—վերջ դնել Ռուսաստանի քաղաքական, ֆինանսական և սօցիալական այն ճգնաժամին, որ եղաւ պատերազմից յետոյ: «Թանը» յուսահատ է կոմս Վիտտէի արժանաւոր տեղապահ գտնելու դժուարութեան առիթով:

ԴԵՐԲԵՆԴ, 19 ապրիլի: Աւազակների հետ ունեցած հրացանաձգութեան ժամանակ վիրաւորված Ղուբայի գաւառի Միւշկիւրսկի մասի պրիստաւ Կօնիւշևսկին վախճանվեց: Կուլլարօ գիւղից երկու վերստ հեռաւորութեան վրա գտնված է ուսանող Վսեվօլօդ Ուսպենսկու դիակը, որին կորզել են աւազակները՝ չը ստանալով որոշեալ ժամանակին ուսանողի հօրից պահանջած գումարը:

ՌԻԳԱ, 19 ապրիլի: Առ այժմ գործաթող բանւորների թիւը 10,000-ի է հասնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի: Տեղական ոստիկանութիւնը դեռ տեղեկութիւն չունի Գապօնի ուր լինելու մասին. բայց ենթադրվում է, որ նա կենդանի է և գտնվում է Ֆինլանդիայում: Ներքին գործերի մինիստրի անունով շարունակ հասնում են բազմաթիւ միջնորդութիւններ կառավարչական կարգով աքսորի դատապարտված անձերից, որոնք խնդրում են աքսորել իրանց փոխանակ Սիբիրի հեռաւոր նահանգների՝ Ռուսաստանի հիւսիսային նահանգները: Մինիստրութեան հրամանով ոստիկանութեան վարչութիւնը ըստ մեծի մասին բաւարարել է այդ միջնորդութիւնները, նշանակելով աքսորավայր Արխանգելսկի նահանգը: — Պետերբուրգ ժամանած Պետական Դումայի մի խումբ գիւղացիներ դիմել են պարլամենտական բիւրօյի մի քանի մասնագէտների—խնդրելով կարդալ մի քանի դասախօսութիւններ արևմտեան Եւրոպայի պարլամենտների մասին, նոյնպէս բացատրել Դումայի անդամների անձեռնմխելիութիւնը: Հռետորները համաձայնել են:

ՓԱՐԻԶ, 19 ապրիլի: Քաղաքն ընդունեց սովորական գործունեայ կերպարանքը, բայց և այնպէս կարգը պահպանելու համար ձեռք առած միջոցները մնում են իրանց ույժի մէջ: բոլոր մեծ հաստատութիւնները աշխատում են. ակնագործարաններում նոյնպէս աշխատանքը սկսվում է, սակայն 1500 նկարիչներ գործադուլ հրատարակեցին: Աշխատանքի ազատութիւնը խախտելու առիթով եղել են մի շարք ձերբակալութիւններ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի: Ոստիկանութեան վարչութեան բացատրութեան վրա հիմնվելով մաքսային տուրքի վարչութիւնը յայտարարում է, որ զօրքի և նաւատորմղի առանձին օֆիցէրները, ինչպէս և զինւորական հաստատութիւնները, պետական զինւորութիւնից դուրս եղած ամեն մի հրազէն իր պարագաներով մաքսատնից ստանալ կարող են միմիայն ներքին գործերի մինիստրից թոյլտուութիւն ունենալուց յետոյ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԱԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԴՈՒՐԳԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. ԱՐԵՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. կլասաւըները հիւր: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և ելէքտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԼԸ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: [illegible] հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից:
(չ.ու.կ.) 47—100

ԲԵՐԼԻՆ
Արտածելի և ներածելի ապրանաց և այլ ամեն տեսակ տեղեկութիւնների համար դիմել հետևեալ հասցէով:
H. Andreassian, Berlin—Briedenau.
(ու.) 1—10

ՋԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
գործեր ընդունում է ամեն տեղ պաշտպանելու հաւատարմատար Բ. Մելիք-Մելքոնեանց.
Թիֆլիս, Վելյամինովսկի փողոց, № 12.
(ու. չ. ե.) 1—3

Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու բոլոր տղամարդ ծխականները, 25 տարեկանից սկսած, հրաւիրվում են ապրիլ ամսիս 23-ին եկեղեցի, ս. պատարագից յետոյ, ժամի 11-ին, ժողով կազմելու և ընտրելու մի պատգամաւոր և մի անձնափոխանորդ Ներսիսեան ազգային թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու համար և որոշումներ կայացնելու ծխական միւս խնդիրների վերաբերութեամբ: Այս ժողովը վաւերական կը ճանաչվի, քանի ծխական և ներկայ լինեն:

(ու. չ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Ապրիլ ամսիս 22-ին, կիրակի, առաւօտեան 10 ժամին, Յորաքաշի ս. Գէորգ եկեղեցում նշանակված է երկրորդ անգամ ընտրութիւն երկու պատգամաւորների և երկու կանդիդատների՝ Հայոց Հոգևոր Ներսիսեան դպրանոցի հոգաբարձական ընտրութեան համար. ուստի բոլոր ծխական այր մարդիկ՝ 25 տարեկանից սկսած հրաւիրվում են եկեղեցի մասնակցելու ընտրութեանը:

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

(ու. կ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Համաձայն Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեան՝ սոյն ապրիլ ամսի 23-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին Կաթուղիկէ ս. Աստուածածին (ս. Գէորգ) եկեղեցւոյ ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդ. համաձայն, հրաւիրվում են երկրորդ ժողով նոյն եկեղեցի, ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:

Կաթուղիկէ եկեղեցւոյ աւագ երէց՝
Տէր-Ստեփան Սամուէլեանց

(ու. չ.) 1—2

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 131—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԵԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7: Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16:
(ա. օ.) 18—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմէօնօվսկի փողոց № 20:
(ու. կ. ե.) 15—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչևա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 72—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բուլշևսկայա փող. № 1. «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11:
(ա. օ.) 20—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ո.) 58—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան, ապրիլ ամսի 23-ին, առաւօտեան ժամը 12-ին, Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ 2-րդ վերջին անգամ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու:

Թիֆլիս քաղաքի Կուկիայի Նորաշէն եկե- Յովհաննիսեան: (չ.ու.կ) 2—3

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւ
դութիւնների: Ընդունելութիւնը ամեն օ
—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլօվսկի պր. տ. Ճավճավաձէի № 3
(կ.չ.ու.) 4—5

ՀՐԱՒԷՐ

Թեմիս բարձր սրբազան առաջնորդի կա
գադրութեամբ, առաջակայ կիրակի, ամ
23-ին, առաւօտեան 10 ժամին Ս. պատարա
յետոյ, կայանալու է երկու պատգամաւո
րի ընտրութիւն, որոնք իրանց միջից ընտ
լու են 12 հոգաբարձու Ներսիսեան հայոց
գևոր դպրոցի համար: Ուստի խնդրեմ
բերել որոշած ժամին ներկայ գտնվելու
և վերջին ընտրութեան իբրև ծխական:
Ս. Սարգիս եկեղ.՝ Կոստ. ք. Արարատեա
(հ.չ.կ.) 1—

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի: Ձ
նարկ մայրերի և դաստիարակչուհի
համար. 77 երգ շարժական խաղերով.
օրինակներ աշխատանքի համար.—գինն
ր. 10%—յատկացրված է հայ արկածեալ
օգտին: Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկև
փողոց, № 13:
(հ. կ. ե.) 2—

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլսկի, Գօտեբոտեն,
Շմիդտ, Բիլի և ուրիշ հետազօտութիւ
նից երևում է, որ կեֆիրը չափազանց
նպաստում է կշռի աւելանալուն. Կե
ֆիրը գործ է ածվում թոքերի հիւան
դութեան, աղիքների կատառի, արեան
պակասութեան, Չըջրուկի, (золотуха)
դալկահարութեան, ուժասպառութեան
ժամանակ և առհասարակ լաւ ներգոր
ծութիւն է ունենում ջղերը հանգստաց
նելու վրա: Կարելի է ձեռք բերել Օ.
Կօրօնայի գործարանում, Լօրիս
Մելիքեանի փող. սեմինարիայի դի
մաց: Ցանկացողներին կարելի է ու
ղարկել իրանց բնակարանը:
(հ.կ.) 19—20

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльный журналъ
„ЭХО СРЕДНЕЙ ШКОЛ
на 1906 годъ.
Органъ «Эхо Средней Школы»
дается при участіи прогрессивныхъ
педагогическаго міра, учащихся и род
лей, и ставитъ девизомъ: **свободная,**
тономная, демократическая шк

Условія подписки:	Разсрочка
Безъ дос. до конца г. 3 р.	При подп. 1 р. 1 сентября 1 р.
Съ дост. и перес.—4 р.	При подп. 1 р. 1 іюня 1 р. 1 сентября 1 р.

За границу—5 р., отд. номер. 10 к.
Контора редакціи приглашаетъ агент
для распространенія журн., и предла
киижн. маг. пріемъ подписки, объявлені
розн. продажу. Въ провинц. номер. вы
лаются по получен. аванса.
Главная контора СПБ., Загородный, 28.
книжн. маг. «КУЛЬТУР
Редакторъ-Издатель, И. Г. Цатур

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապ
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	7 » 38 ». եր.	—	—	7 ժ. 06
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10
Կարս հասնելը.	4 » 23 » »	—	—	8 ժ. 48

„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
Պատկերը տպագրվելու էր 15 տարի առաջ, բայց ինձանից միանգամայն անկա
պատճառով լոյս չը տեսաւ այն ժամանակ. ամեն տեսակ միջոցներ գործ դնելով
ամեն արգելքներ վերացնելուց յետոյ, վերջապէս աջողվեց ինձ արտասահմանում
տպագրել 98 գոյնով:
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
նոյնպէս կարող է ծառայել որպէս օրինակ կանվայի վրա ասեղնագործելու. գին
է 5 րուբլի ճանապարհածախսով միասին:
Ցանկացողները դիմելու են՝ Тифлисъ, Вельяминовская № 24, Вардану Варданяну.
(ու. կ. ե.) 1—10

1896
ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ԲՐՕԿԱՐ եւ ԿՕՆ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ամեն մրցութիւնից բարձր:
8—12 (ա.մ. 20)

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15